

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

**ԿՈՂՋՈՒՆԵՆՔ
 ՍՓԻՒՌՔԻ
 ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ
 ՀԱՍՏԱՏՈՒՄԸ**

ՏՕՔՔ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՀՀ Կառավարության կազմէն ներս, առաջին անգամ ըլլալով, հաստատուեցաւ ՀՀ Սփիւռքի Նախարարութիւնը:

Այդոյն կարեւորութիւններ կայացնող պաշտօնին հրաւիրուած է Տիկ. Հրանուշ Յակոբեան, որ իր ուսումնական բարձր արժանիքներու կողմէն, դեռեւս խորհրդային ժամանակաշրջանին ստանձնած պատասխանատու բարձր պաշտօններու քերտմով, ձեռնմղած կը թուի ըլլալ հասարակական լայն փորձառութիւն:

Ակնկալելի էր, որ Տիկ. Յակոբեան, ի պաշտօնէ այցելէր Սփիւռքը: Այս օրերուն, ան կը գտնուի Քալիֆորնիա, «Հայաստան Հիմնադրամ»-ի կազմակերպած Տարեկան Թելեֆոնի առիթով:

Ծանօթացման կարգով, ան այցելեց մեր ազգային կառոյցները: Ունեցաւ հարցազրոյցներ, ելոյթներ, դիրքորոշումներ: Փոխանցեց պատգամներ: Ոգեւորուեցաւ: Փորձեց ոգեւորել:

Այո. «Եկաւ», «Տեսաւ», «Լսեց»:

Հայրենի այլ նախարարութիւններու հետ բաղդատած՝ Հրանուշ Յակոբեանի հետ մեր ունեցած հանդիպումները կոչուած էին ըլլալու աւելի անմիջական, ջերմ ու հաղորդական: Անշուշտ, ենթադրելի էր, որ այս նախարարութիւնը, իր ներկայացուցչական հանգամանքով, գտնուէր մեր մտահոգութիւններու, ցաւերու, առաջարկներու հարազատ բարգմանը հանդիսանալու բարոյական պարտաւորութեան տակ, կառավարական կազմէն ներս:

Մեր Նախարարութիւնին քաջ գիտէ, որ ներկայ ժամանակներուն, Սփիւռքի ազգային-հաղահական շրջանակներէ ներս, ընդհանրապէս վստահութիւնը, գործակցութեան ոգին վերացած է հայրենի պետականութեան վարիչներուն հանդէպ:

Ծանօթ է ան, որ ազգային իշխանութիւնները խոշտանգումներով, սպանութիւններով, բռնութեամբ, ազատ խօսքի նկշումով, օրինականութեան խախտումներով, արդարադատութեան ոտնահարումով, սահմանադրական կեանքի խեղաթիւրումներով կը հակադարձեն արդար, սահմանադրական ու ժողովրդավար հայրենի պահանջող քաղաքական առաջնորդներուն եւ ժողովրդական զանգուածներուն:

ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 121-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ ԸՆԿ. ՎԱՀԱՆ ՇԻՐԽԱՆԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ «ՀԱՅԱՍՏԱՆ ՉՈՒՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՇՈՒԵՏՈՒ ԵՒ ՆՐԱՆ ԾԱՌԱՅՈՂ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

Նոյեմբեր 21, Ուրբաթ եւ 22 Շաբաթ օրերը հանդիսացան իրապէս նշանակելի եւ պատմական օրեր, Ս.Դ.Հ.Կ.ի Լոս Անճելըսեան կազմակերպութեան կուսակցական եւ համակիր շրջանակներուն համար:

Սկսելով 121-ամեակի հանդիսութենէն, որ տեղի ունեցաւ Շաբաթ, Նոյեմբեր 22-ի երեկոյան Կլէնտէլի «Կլոր Եկեղեցիէն» ներս, օրուայ գլխաւոր բանախօս՝ պաշտպանութեան նախկին փոխնախարար եւ ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան Հայաստանի ներկայացուցիչ Ընկ. Վահան Շիրխանեան ուրուագծելով Հայ ժողովուրդի վիճակը յայտարարեց՝ «Հայաստանը չունի ժողովուրդին ծառայող եւ նրան հաշուետու իշխանութիւն»:

Տօնակատարութեան ներկայ էին Արեւմտեան Ամերիկայի Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, շրջապատուած եկեղեցականներու դատով, Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ներկայացուցիչ՝ Տ. Արտակ Քհնյ. Տէմիրճեան, Հայր Կաթողիկէ համայնքի ժողովրդապետութեան կողմէ Հայ Աստուծոյ Մարդեան, Հայաստանի Հանրապետութեան Լոս Անճելըսի փոխ



ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան Հայաստանի ներկայացուցիչ Ընկ. Վահան Շիրխանեան ելոյթ կ'ունենայ 121-ամեակի հանդուսութեան

հիւպատոս Մերոպ Շապոյեան, Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան ատենապետ Ընկ. Սեդրակ Աճէմեան եւ իր տիկինը, Կ.Վ. եւ Ընկ. Գրիգոր Խոտանեան եւ իր տիկինը, Ռամկավար Ազատական Կուսակցութեան Շրջանային վարչութեան ատենապետ Յակոբ Նազարեան:

չին Գոնկրեսի անդամներ, մշակութային եւ համայնքային այլ կազմակերպութեանց ներկայացուցիչներ, մամուլի անձնաւորութիւններ եւ մեծ թիւով հասարակութիւն:

Ներկայ էին նաեւ Հայ Ազգա-

Շաբ.ը էջ 5

**ՀԱՄԱՐՊԸՐԿ
 ՀԱՅԱՍՏԱՆԵՆ ՄԵԿԱԾ Է
 ՀԻԱՍԹԱՓՈՒԱԾ**



Եւրոպայի Խորհուրդի Մարդու իրաւունքներու պաշտպան Թոմաս Համմարպըրկ

Եւրոպայի Խորհուրդի Մարդու իրաւունքներու պաշտպան Թոմաս Համմարպըրկ Երեւան կատարած իր այցելութեան աւարտին յայտնած է թէ, Հայաստանէն կը մեկնի հիասթափուած՝ ի տես մարդու իրաւունքներու առումով տիրող իրավիճակին:

«Ե՛ւ Հանրապետութեան նախագահին, եւ կառավարութեան անդամներուն ես արդէն ըսած եմ, որ անվարան քննադատական դիրքորոշում կ'որդեգրեմ»:

«Իմ ձեռք ձգած ամբողջ տեղեկութիւնները գիտ բաւական

ՍՓԻՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՆՈՅՇ ՅԱԿՈԲԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ Ս.Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ



Հ.Հ. Սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեան եւ Հայաստանի գլխաւոր հիւպատոս Արմէն Լիլոյեան Ս.Դ.Հ.Կ.ի ներկայացուցիչներուն հետ

Այս օրերուն անդրանիկ այցելութեամբ մը Լոս Անճելըս կը գտնուի Հայաստանի նորակազմ Սփիւռքի Նախարար Տիկին Հրանուշ Յակոբեան:

Հինգշաբթի, Նոյեմբեր 20ին, 2008, Փասատինայի Հնչակեան Կեդրոնէն այցելեց Հ.Հ. Սփիւռքի նախարար Տիկ. Հրանուշ Յակոբեան: Իրեն կ'ընկերակցէին Լոս Անճելըսի մօտ Հայաստանի գլխա-

ւոր հիւպատոս Արմէն Լիլոյեան, լրագրող Յարութիւն Առաքելեան եւ փոխ հիւպատոս Սահակ Մարգիսեան:

Հիւրերը ջերմօրէն դիմաւորուեցան Արեւմտեան Ամերիկայի Ս.Դ.Հ.Կ. Վարիչ Մարմնի եւ «Մասիս» շաբաթաթերթի ներկայացուցիչներուն կողմէ: Շրջանիս ատե-

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԷԼԻ ԱՏՈՒՄ ԵՆ

Այն բանից յետոյ, երբ Աժ Մարտի 1-ի իրադարձութիւնները ուսումնասիրող ժամանակաւոր յանձնաժողովի նախագահ Սամուէլ Նիկոնանը հաստատեց, որ ինքը ուսումնական լրատուամիջոցի թղթակցին տուած հարցազրոյցում ասել է, որ Մարտի 1-ի դէպքերի ժամանակ նաեւ դիպուկահար է եղել, իրաւապահների շրջանում իրարանցում սկսուեց:

Երէկ նախ մտքի ակնթարթալին պայծառացում է ունեցել ՀՀ գլխաւոր դատախազ Աղուան Յովսէփեանը: Նա ԵԽ Մարդու իրաւունքների յանձնակատար Թոմաս Համմարբերգի հետ հանդիպման ժամանակ հաստատել է, որ ոստիկանութեան գործերի կազմում եղել է դիպուկահար: Իհարկէ, առայժմ նշում է, թէ իբր դիպուկահարը մէկն է եղել, որին Յունիսին հարցաքննել են: ՀՀ Գլխաւոր դատախազութեան տարածած հարցազրուութեան համաձայն, Յովսէփեանը Համմարբերգին ասել է, որ Մարտի 1-ին հրազէնային մարմնական վնասուածք ստացած անձանց մարմնից, ինչպէս նաեւ մահացած անձանց դիակներից հանուած գնդակներից ոչ մէկը դիպուկահարը չի արձակել:

Նոյն խնդրի հետ կապուած մտքի պայծառացում է ունեցել նաեւ Մարտի 1-ի քրէական գործը քննող քննչական խմբի ղեկավար Վահագն Յարութիւնեանը: Նա «Ազատութիւն» ռադիոկայանի թղթակցին տուած հարցազրոյցում ասել է, որ դիպուկահարը յատուկ չի բերուել դէպքի վայր պարզապէս կարգն է այդպիսին: «Կոնկրետ, եթէ գործիւնաւորումը իր ծառայութիւնը իրականացնում է մարտական հրազէնով, նրա հետ մարտական հերթափոխի դուրս է գալիս նաեւ դիպուկահար, որի ծառայութիւնը կարող է պէտք լինի կամ՝ ոչ: Տուեալ դէպքում աւելի քան օգտակար է եղել նրա ներկայութիւնը, քանի որ Լէօ փողոցում, որտեղ դիպուկահարը տեղակայուած է եղել, զանգուածային անկարգութեան մասնակի կրակոցից սպանուել է գինուորականը, դրանից առաջ գինուորականների ուղղութեամբ նետուել է նունակ՝ էլի մարտական, դրանից յետոյ կրկին փորձ է արուել կրակել

գինուորների շարքերի ուղղութեամբ: Դիպուկահարը ունի արձակած մէկ կրակոց, եւ այդ կրակոցով ինքը կանխել է երկրորդ կրակոցը գինուորների շարքերի ուղղութեամբ», - ասել է Յարութիւնեանը:

Վերջինս նոյնիսկ ասել է, թէ իրենք ունեն գինուորի վրայ կրակողի նկարագիրը եւ փնտրում են նրան: Քննիչը ասել է, որ Մարտի 1-ին դէպքի վայրից յայտնաբերել են տարբեր հրազէնների հազարից աւել պարկուճներ եւ դրանք համեմատում են իրաւապահների մօտ եղած հրազէնների եւ սպանուածների դիակներից հանուած գնդակների հետ: Այսինքն, կարելի է ենթադրել, որ Մարտի 1-ի դէպքերը մի քանի օր առաջ են եղել եւ ոչ թէ ութուկէս ամիս առաջ:

Ինչեւէ, հաշուի առնելով, որ Յովսէփեանի եւ Յարութիւնեանի մօտ մտքի պայծառացման միտումներ են ի յայտ եկել, ուստի, կարծում ենք, որ ժամանակն է, որպէսզի նրանք պատասխանեն, թէ ինչո՞ւ էին իրենք Մարտի 5-ին պաշտօնապէս յայտարարում, որ «Իրաւապահ մարմինների կողմից ցուցարարների ուղղութեամբ որեւէ կրակոց չի արձակուել» եւ, որ, իբր, «Իրաւապահների կողմից օգտագործուել են արցունքաբեր գազ եւ լուսածիր գնդակաւոր փամփուշտներ»: Իսկ այսօր արդէն Յարութիւնեանը խոստովանում է. «Թէ գործիւնաւորումը իր ծառայութիւնը իրականացնում է մարտական հրազէնով»: Այսինքն, Յովսէփեանը եւ Յարութիւնեանը ստախօսներ են, որոնք իրենց պաշտօնեական պարտականութիւնները կատարելիս պարբերաբար կեղծ տուեալներ են հրապարակում: Ուստի, հաշուի առնելով, որ Մարտի 1-ի սպանդի կոծկման գործընթացը կազմակերպող այս պաշտօնեաները ընդունել են մէկ դիպուկահարի գոյութիւնը: Այժմ արդէն հարց է ծագում, որտե՞ղ է նա տեղակայուած եղել: Բարձրաստիճան կեղծարարները ի՞նչ երաշխիք են տալիս, որ եթէ հանրութեան շրջանում Մարտի 1-ի հետ կապուած նոր տեսանկյուններ ի յայտ գան, ապա արդե՞օք իրենց մօտ մտքի նոր պայծառացումներ տեղի չեն ունենայ, եւ չեն յիշի, ասենք,

երկրորդ, երրորդ, չորրորդ եւ այսպէս առնուազն 10 դիպուկահարների մասին, որոնք տեղակայուած են եղել Պարոնեան, Լէօ եւ Գրիգոր Լուսաւորիչ փողոցների շէնքերի կտուրներին:

Կեղծարարների յիշողութիւնը թարմացնելու համար յիշեցնենք, որ Մարտի 1-ի 10 գոհերից չորսը սպանուել են Պարոնեան փողոցում: Մասնաւորապէս, Գրիգոր Գէորգեանը սպանուել է գանգի միջանցիկ հրազէնային վնասուածքից, Տիգրան Խաչատրեանը եւ Արմէն Փարմանեանը սպանուել են քունքին արձակուած կրակոցից, պարզապէս սովորական գնդակի փոխարէն մարդասպանները օգտագործել են «չերչոմուխա» տեսակի յատուկ միջոցը, իսկ Դաւիթ Պետրոսեանը մահացու հրազէնային վնասուածք է ստացել կրծքավանդակի մասում: Աւելին, եթէ ցուցարարների մօտ հրազէն է եղել, ապա ինչպէ՞ս է ստացուել, որ վիրաւոր ոստիկաններից ոչ մէկի վնասուածքը հրազէնային չէ, ինչպէ՞ս է ստացուել, որ ցուցարարների գտնուելու վայրից, այսինքն՝ Միւսանիկեանի արձանի շրջակայքից, ոչ մի պարկուճ չի յայտնաբերուել: Այո, Յարութիւնեանը երբ ասում է, որ դէպքի վայրից հազարից աւել պարկուճ է յայտնաբերուել, նա մոռանում է աւելացնել, որ այդ պարկուճները յայտնաբերուել են միայն այն վայրերից, որտեղ եղել են իրաւապահի համազգեստի տակ ծպտուած գրոհայինները:

Յաջորդ հարցը այն է, թէ ինչո՞ւ է դիպուկահարը միայն Յունիսին հարցաքննուել, այդ ի՞նչը իրենց ստիպեց հասկանալ, որ դիպուկահարների գոյութիւնը չեն կարողանայ թաքցնել: Միգուցե այն փաստը, որ հենց այդ ժամանակ էր սկսել գործել Մարտի 1-ի իրադարձութիւնները ուսումնասիրող հասարակական յանձնախումբը, որը զբաղուած էր ողբերգական իրադարձութիւնների տեսագրութիւններ հաւաքելով: Մի խօսքով, Յովսէփեանը եւ Յարութիւնեանը, աւելի լաւ կը լինի՝ մտածեն, թէ իրենց մտքի առաջիկայ պայծառացումների ժամանակ ինչ նոր խոստովանութիւն են կատարելու:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

ՀԱՅԿԱԿԱՆ ՔԵԱՆԴՐԲԱԶՈՒԹԻՒՆ

Ղարաբաղի հարցը կրկին օրակարգում է: Նման թէժ քննարկումներ, անշուշտ, վերջին 20 տարում շատ են եղել, անգամ շրջաններ են եղել, երբ թուացել է, թէ ուր որ է հարցը կը լուծուի, ինչ-որ փաստաթուղթ կ'ստորագրուի: Սակայն քննարկումները կամաց-կամաց մարել են, դրսի ճնշումը՝ նուազել, եւ Ռոբերդ Քոչարեանը հերթական անգամ ճարպկօրէն ճողոպրել է հարցի լուծումից: Դրանով չմտորէն երկարաձգելով իր պաշտօնավարման ժամկէտը եւ շրջանցելով իշխանութեան ճանապարհին առաջացած խուժերը: Կը յաջողուի՞ արդեօք Սերժ Սարգսեանին կրկնել իր նախորդի ճարպիկ քաղաքականութիւնը եւ խոյս տալ պաշտօնանկութեան վտանգից: Կը կարողանա՞յ արդեօք նա լարախաղացի նման այսուհետ եւս քայլել ղարաբաղեան ճոպանի վրայով՝ "ոչ ինձ, ոչ քեզ" քաղաքականութիւնը շարունակելով եւ 20 տարի հայ ժողովրդի ուսերին ծանրացած այս խնդրի լուծումը յաջող սերունդներին ժառանգելով: Կը կարողանա՞յ համոզել տարբեր միջազգային կառույցներին ու գերտէրութիւններին, որ ինքը մեծ սիրով ու բաց սրտով կը լուծէր այս հարցը, եթէ չլինէր հայ ժողովրդի մենթալիտետը, ազրբեջանցիների չկամութիւնը, դարաբաղցիների յամառութիւնը եւ, վերջապէս՝ ընդդիմութեան դիմադրութիւնը: Էլ չենք խօսում հարաւկովկասեան ինտեգրացիայի, մարդու իրաւունքների, տնտեսական բազում խնդիրների մասին, որոնք իսկ Սերժ Սարգսեանը ստիպուած է լուծել, հակառակ դէպքում Հայաստանում աղէտ կը լինի, ֆինանսատնտեսական, էկոլոգիական ու չգիտեմ էլ ինչ ճգնաժամ, որն անխուսափելի-

Շաբ.ը էջ 4

ՄԱՅՆԴՈՐՓԻՑ ԱՌԱՋ ԵՒ ՅԵՏՈՅ

«Աղբբեջանը 21-րդ դարում. յաջողութեան ռազմավարութիւնը» թեմայով օրերու Բաբուճ կայացած միջազգային համաժողովի ժամանակ նախագահ Իլհամ Ալիեւը, խօսելով մայնդորֆեան Հոչակագործի մասին, իր միտքը հետեւեալ կերպ է ամփոփել. «Կովկասում խաղաղութեան կարելի է հասնել միայն Աղբբեջանի բռնագաւթուած տարածքների ազատումից յետոյ»: Մայնդորֆից յետոյ մենք արդէն առիթ ունեցել ենք խնդրոյ առարկայի շուրջ լսելու նաեւ Հայաստանի նախագահի մեկնաբանութիւնները: Յիշեցնենք, որ դրանք յանգում են հետեւեալ արձանագրմանը՝ Ղարաբաղը երբեք չի լինելու Աղբբեջանի կազմում, եւ, բացի այդ, հայկական կողմը երբեք չի համաձայնի Ղարաբաղի անվտանգութեանը զէթ նուազագոյն հարուած սպառնացող փոխզիջումներին:

Հետեւութիւնը միակն է. անկախ ամենատարբեր քաղաքագէտների ու վերլուծաբանների հնչեց-

րած զանազան գնահատականներից, մայնդորֆեան Հոչակագիրը, իրականում, բառի բուն իմաստով ոչինչ է: Եվ առաջին հերթին՝ այն պատճառով, որ այդ փաստաթուղթը բացարձակապէս ոչինչ չի փոխել հակամարտող կողմերի հոետորաբանութեան մէջ: «Առաւօտն» արդէն անդրադարձել է Հոչակագործի այն հատուածին, որում խօսուում է հակամարտութիւնը բացառապէս «միջազգային նորմերի եւ սկզբունքների շրջանակում կարգաւորելու»՝ կողմերի պարտաւորութիւնների մասին, նշելով, որ տրամագծօրէն հակադիր մեկնաբանութիւնների տեղիք տուող այդ ձեւակերպումն իրականում ոչ թէ օգնում, այլ աւելի է խճճում խնդիրը:

Անշուշտ, մենք այս կարծիքին չէինք լինի, եթէ Մայնդորֆում ստորագրուած այդ փաստաթղթում լինէր նաեւ մօտաւորապէս այսպիսի մի կէտ. «այսուհետ եւ մինչ հակամարտութեան վերջնական կարգաւորումը աղբբեջանական

կողմը ձեռնպահ կը մնայ հարցը բացառապէս Աղբբեջանի տարածքային շրջանակներում լուծելու մասին, իսկ հայկական կողմը ձեռնպահ կը մնայ կնրգաւորումը միայն Լեւոնային Ղարաբաղի լիակատար անկախութեան տեսքով պատկերացնելու մասին յայտարարութիւններից»: Սա թերեւս որոշակի լրջութիւն կը հաղորդէր բանակցային գործընթացին, ստիպելով մտածել, որ կողմերը, այնուամենայնիւ, սկսել են հակուել դէպի շահագրգիռ եւ վերջնանպատակ ենթադրող խօսակցութեան:

Մինչդեռ ի՞նչ է ստացուում: Ստացուում է այն, որ Մայնդորֆից մէկ օր առաջ մենք ունէինք նոյն վիճակը, ինչն ունեցանք նաեւ Մայնդորֆից մէկ օր յետոյ: Հետեւաբար քանի՞ կողմից արժէ այդ փաստաթուղթը: Այս հարցին, ի դէպ, որոշ քաղաքագէտներ փորձել են պատասխանել: Նրանք նշել են, թէ այդ Հոչակագիրը, իրականում

Շաբ.ը էջ 4


ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՄԱՆԴԱՅԻՆԵՆ ԼԱՐՆԱՆԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԾՐՋԱՆԻ ԽՄԲԱԳԻՐ՝ SOPEB ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԵԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ ՍԱՐԱԿ ԹՈՒԹԵԱՆ ԿԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ ԴԵՆ. (626) 797-7680 Ֆաքս. (626) 797- 6863 E:Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com MASSIS Weekly Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 (USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail), Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104

ՀԱՅԱՍՏԱՆ

ԳՈՐԳԵՆ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ, «ԵՐԲ ԶԱՅԱՍՏԱՆՆ ՈՒՆԵՆԱՅ ԼԵԳԻՏԻՄ ՆԱԽԱԳԱՐ, ԱՊԱ ՂԱՐԱԲԱՂԻ ԶԱՐՑՆ ԷԼ ԿԸ ԼՈՒԾՈՒԻ ԴՐԱԿԱՆ»

Սերժ Սարգսեանի նախաձեռնած քննարկումը կուսակցութիւնների հետ, որի թեման Ղարաբաղի հարցն էր, ոչինչ չի տալու: Այդ միտքը նոյեմբերի 24-ին «Հայելի» ակումբում արտայայտել է Հայ Ազգային կոնգրեսի անդամ Ս.Դ.Հ.Կ. վարչութեան անդամ Գուրգէն Եղիազարեանը: Նրա խօսքով, Սերժ Սարգսեանը հնչեցրել է իր մտեցման յայտնի երեք կէտեր, որոնց պարագայում սակայն առաջանում են հարցեր: Ըստ Գուրգէն Եղիազարեանի, հարց է, թէ երբ Սերժ Սարգսեանն ասում է, որ հարցը լուծուելու հանրաքուէ է լինելու, արդեօք ինչ հանրաքուէի մասին է խօսքը: Ղարաբաղի ժողովուրդը, ըստ Գուրգէն Եղիազարեանի, արդէն իսկ արել է իր հանրաքուէն, ունի անկախ պետութիւն, Սահմանադրութիւն, պետական ինստիտուտներ, ուրեմն ինչ հանրաքուէի մասին է խօսքը, նշում է Եղիազարեանը եւ հարցնում, թէ արդեօք այն հանրաքուէի, որից առաջ Ադրբեջանը 300 հազար մարդ կը բերի Ղարաբաղ: Եղիազարեանը հարցնում է նաեւ, թէ Հայաստանի եւ Ղարաբաղի ինչ ընդհանուր սահմանի մասին է խօսում Սերժ Սարգսեանը, երբ արդէն իսկ այդ սահմանն առկայ է, կամ ինչ միջազգային երաշխիքների մասին է խօսում, եթէ Ղարաբաղի ժողովրդի համար այդ երաշխիքը նրա պետականութիւնն է:

Գուրգէն Եղիազարեանն ասել է, որ եթէ խօսում ենք ընդհանուր յայտարարի, միասնական մտեցման մասին, ապա դրա մասին պէտք էր մտածել Փետրուարի 19-ի նախագահի ընտրութիւնը կեղծելուց, ընդդիմութեան ակտիվիստ եւ վստահուած անձ աղջիկներին ու կանանց այդ օրը խոչտանգելուց առաջ, լցոնումներ անելուց առաջ: Ըստ Գուրգէն Եղիազարեանի, Ղարաբաղի հարցը դրական լուծելու համար Հայաստանն ունի մէկ գործոն՝ լինել



Ս.Դ.Հ.Կ. վարչութեան անդամ Գուրգէն Եղիազարեան

առաւել ժողովրդավար, աւելի, քան Ադրբեջանը, մինչդեռ Փետրուարի 19-ին, ըստ Գուրգէն Եղիազարեանի, հայ ժողովրդի դէմ կատարուեց յանցագործութիւն: Եղիազարեանը հարցնում է, թէ արդեօք ընտրակեղծիքով նախագահ դարձող Սերժ Սարգսեանն այն ժամանակ չէր մտածում, որ կա Ղարաբաղ, որ պէտք է միասնականութիւն, որ պէտք է Ղարաբաղը փոխել իշխանական աթոռի հետ:

Եղիազարեանը նաեւ յայտարարել է, թէ իրեն ինչ որ տեղեկութիւն են յայտնել մարդիկեան սկզբունքների մասին, որին ինքը չի ցանկանում հաւատալ: Դա, ըստ Եղիազարեանի, այն է, որ այդ սկզբունքներում դրոյթ կա, թէ Ղարաբաղում պէտք է դադարեցնել բոլոր գրանցումները, թէ պէտք է դադարեցնել ռազմավարական ճանապարհների շինարարութիւնը:

Երբ Հայաստանն ունենայ լեգիտիմ նախագահ, ապա Ղարաբաղի հարցն էլ կը լուծուի դրական, կարծում է Եղիազարեանը:

ՎԱԽԵՑՆՈՒՄ ԵՆ «ՄԱՐՏԻ 1-Ի» ԳՈՐԾՈՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Փաստաբանների պալատի խորհուրդը վերականգնել է փաստաբան Մուշեղ Շուշանեանի արտօնագրի գործողութիւնը: Փաստաբանը միայն «Մարտի 1»-ի գործով 5 մեղադրեալի է պաշտպանում:

Յիշեցնենք, որ Ոստիկանութեան քննչական վարչութիւնից ստացած տեղեկութեան համաձայն՝ փաստաբանների պալատը, հիմք ընդունելով «Փաստաբանութեան մասին» օրէնքի 38-րդ յօդուածի պահանջը, որոշել էր փաստաբան Մուշեղ Շուշանեանի՝ արտօնագրի գործունէութիւնը կասեցնել:

Իսկ փաստաբանի դէմ քրէական գործ է յարուցուել կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրաւասութեան դատարանի դատաւոր Արշակ Պետրոսեանի միջնորդութեան հիման վրայ: Դատաւորը փաստաբանին մեղադրում է դատարանի հանդէպ անյարգալից վե-

«ՄԻԱՑՈՒՄ» ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Ե ԵՐԱԺԱՐՈՒԵԼ ՊԵՏԱԿԱՆԱԿՈՐԾԱՆ ԶԻՋՈՒՄՆԵՐԻՑ

«Միացում» ազգային նախաձեռնութիւնն ծանուցում է փոխանցել էդուարդ Նալբանդեանին, որում զգուշացնում է Հայաստանի արտաքին գործերի գերա-

րաբերմունք ցուցաբերելու համար:

«Իմ նկատմամբ քրէական գործի յարուցումը միանշանակ կապուած է «Մարտի 1-ի» գործով 5 պաշտպանեալի, եւ առաջին հերթին՝ Վարդգէս Գասպարի դատավարութեան ընթացքում իմ պարտականութիւնները իրականացնելու եւ ինձ այդ գործից հեռացնելու հետ», - «Ա.1+»-ին ասաց Մուշեղ Շուշանեանը:

Փաստաբանը իր պաշտպանեալի՝ քաղաքատարկեալ Վարդգէս Գասպարի դատավարութեան ընթացքում յայտարարել է, որ դատարանը քաղաքական հետապնդման գործիք է եւ լքել է դատարանի դահլիճը:

Շուշանեանն իր փաստաբանական գործունէութիւնը կը շարունակի, այնքան ժամանակ, քանի դեռ իր նկատմամբ յարուցուած քրէական գործը դատարան չի հասել եւ դատավճիռ չի կայացուել:

տեսչութեան ղեկավարին ազատագրուած տարածքները յանձնելու քաղաքական եւ իրաւական հետեւանքների վերաբերեալ:

«Հայաստանի ազատագրուած

«ՆԱԽԱԳԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ ՄԻՋԱՍՏԵԼ Է ՓԱՍՏԱՐԱԲԱՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՒՈՒԹԵԱՆԸ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՑ»:
Հայ ազգային կոնգրեսը եւ «Ժառանգութիւն» կուսակցութիւնը համատեղ յայտարարութեամբ են հանդէս եկել՝ պնդելով, որ «նախագահի աշխատակազմն ապօրինաբար միջամտել է Փաստահաւաք խմբի գործունէութեանը»:

Ողջունելի համարելով Նոյեմբերի 14-ից աշխատանքը սկսած Փաստահաւաք խմբի երկու որոշումները՝ Վահէ Ստեփանեանին խմբի ղեկավար եւ Մարդու իրաւունքների պաշտպանի գրասենեակը խմբի աշխատանքի վայր ընտրելու մասին, յայտարարութեան հեղինակները յաւելում են, որ «նախագահի աշխատակազմը միջամտել է Փաստահաւաք խմբի աշխատանքներին՝ որպէս աշխատավայր պարտադրելով Ազգային ժողովի շէնքը՝ դրա համար չունենալով որեւէ իրաւական ակտով սահմանուած նման լիազօրութիւն»:

«Հաշուի առնելով այն հանգամանքը, որ նախագահի աշխատակազմն ապօրինաբար միջամտել է Փաստահաւաք խմբի գործունէութեանը, նաեւ այն, որ խմբին պարտադրուած է աշխատել մի հաստատութիւնում, որտեղ ապահովուած

չեն վկաների ինքնութեան չբացայայտման, վկաներին եւ փորձագէտներին տարատեսակ ազդեցութիւններից զերծ պահելու սկզբունքները, ակնյայտ է դառնում, որ սրանով էապէս նուազելու է Փաստահաւաք խմբի աշխատանքի պաշտպանութեանը հնարաւոր ճնշումներից, ուստի նաեւ արդիւնաւէտութիւնը մարտիմէկեան ոճրագործութեան փաստերի բացայայտման հարցում», - ասուած է յայտարարութիւնում:

Հայ ազգային կոնգրեսի եւ «Ժառանգութեան» համոզմամբ՝ «իշխանութիւնների նման գործողութիւնները եւս մէկ անգամ վկայում են, որ նրանք շահագրգռուած չեն Փաստահաւաք խմբի կողմից Մարտի 1-ի իրադարձութիւնների օբիեկտիւ եւ անկախ հետաքննութեան անցկացման մէջ»:

Պահանջելով իշխանութիւններից հրաժարուել «Փաստահաւաք խմբի վրայ ճնշումներ իրականացնելու եւ նրա աշխատանքը վերահսկողութեան տակ պահելու փորձերից», յայտարարութեան հեղինակները վերահաստատում են, որ այդ փորձերի շարունակուելու դէպքում ստիպուած կը լինեն հետ կանչել իրենց ներկայացուցիչներին:

ՔԱՂԱՔԱԳԵՏԸ ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ Է ԶԻՋԵՑՆԵԼ ՆՇԱԶՈՂԸ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Զի կարելի անմեղաւորական մարդկանց հաւաքել մի տեղ եւ ասել, թէ քննարկուել է ԼՂՀ խնդրի կարգաւորման գործընթացը», - «Ա.1+»-ին տուած հարցազրոյցում ասաց Հայաստանի քաղաքագէտների միութեան նախագահ Հմայեակ Յովհաննիսեանը:

Այսինքն, քաղաքագէտի համար անհասկանալի է, թէ ինչպէս կարող է Ալեքսանդր Արզումանեանը նստած լինել բանտում, իսկ Սերժ Սարգսեանը խորհրդակցի կուսակցութիւնների ղեկավարների հետ այն սկզբունքների շուրջ, որ Մարդիկեան անուան տակ դրուած է սեղանին, քանզի դրանք եւս Միասնի խմբի 13 տարուց աւելի տեւող գործընթացի արդիւնք են:

«Այն լուծումը, որ այսօր կա սեղանին, եւ կոչուած է Մարդիկեան սկզբունքներ, դա մէկ օրում ձեւաւորուած մտեցում չի, դրանք Միասնի խմբի համանախագահների շրջանակներում յղկուել են այդ ձեւաչափի գործունէութեան առաջին իսկ օրուանից, ուստի, բոլոր նրանք, ովքեր տարբեր փուլերում իրազեկ են եղել, մասնակցել են բանակցային գործընթացին, կամ մասնակցել են բանակցային գործընթացում մեր դիւանագիտութեան մարտավարութեան մշակման գործին, ովքեր իրազեկ են եղել գործընթացի տարբեր փուլերում՝ պէտք է այսօր ստանձնեն կոլեկտիվ պատասխանատուութիւն այն բանի համար, ինչ դրուած է այսօր սեղանին եւ ստանձնելով ու գիտակցելով այդ պատասխանատուութիւնը՝ փորձեն քննարկել, թէ որքանով է սեղանին դրուած առաջարկը համապատասխանում առաջին հերթին Արցախի, ապա



Հայաստանի քաղաքագէտների միութեան նախագահ Հմայեակ Յովհաննիսեան

Հայաստանի շահերին, - ասաց նա՝ շարունակելով:

Զի կարելի տարանջատել Միասնի խմբի հովանու ներքոյ վարուող բանակցութիւնների տարբեր փուլերը, որոնք իրար հետ շաղկապուած են մէկ ընդհանուր տրամաբանական կապով: Հաւաքել իրար գլխի բացարձակապէս այդ գործից անտեղեակ, անմեղաւոր տարբեր կարգի կուսակցապետերի եւ յաւակները, որ այդ ձեւաչափով հնարաւոր է մտնելու հասարակութեան կողմից վստահութեան աւելացման հիմնահարցի լուծմանը, մեղմ ասած անլուրջ է»:

Հմայեակ Յովհաննիսեանը եւ աւելացրեց, որ ինքը զարմանում է այն կուսակցապետերի՝ «իրենց քաղաքական գործիչ յորջորջող մարդկանց հորթի հրճուանքից, որը նրանք դրսեւորում են այդ խորհրդակցութեան կապակցութեամբ, որ տեւել է 5 ժամ, բայց ըստ իս, բացարձակապէս ջուր ծեծոց է եղել»:

տարածքի որ-է հատուածի ենթադրուող յանձնումը Հայոց պետականութեան հիմքերը քայքայելուն միտուած ծանրագոյն պետական յանցագործութիւնն է - Հայաստանի քաղաքացիների կեանքի նկատմամբ անհանդուրժելի

ոտնձգութիւն: - ասուած է ծանուցման մէջ:

Նախաձեռնութիւնը պահանջում է անյապաղ դադարեցնել «պետականակործան» գիշումներին ընդառաջ գնալու բանակցային քաղաքականութիւնը:

ԼՈՒՐԵՐ

JANE'S INTELLIGENCE: «ՂԱՐԱԲԱՂԻ ՇՈՒՐՋ ՊԱՏԵՐԱԶՍԸ ԱԻԵԼԻ ԱՆՐԱԲԱՆԱԿԱՆ Է ԹԻՈՒՄ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Jane's Intelligence հեղինակաւոր վերլուծական կենտրոնի հրատարակած վերջին գեկոյցի համաձայն՝ վրաստանի հետ կարճատեւ պատերազմից յետոյ Ռուսաստանը աւելի է ամրապնդում իր ազդեցութիւնը Կովկասում: Դրա շնորհիւ է Նոյեմբերի 2-ին Մոսկուայում ստորագրուել հայ-ռուս-ադրբեջանական եռակողմ հռչակագիրը:

Փաստաթուղթը չի վկայում այն մասին, որ հակամարտութեան վերջնական կարգաւորման համաձայնեցումն արդէն ավարտին է մօտենում: Եւ այնուամենայնիւ, ըստ Jane's-ի, այն նպատակ է հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հրադադարի պահպանմանը:

Միացեալ Նահանգները եւ եւրոպական դաշնակիցների ուշադրութեան կենտրոնում վաշինգտոնում մեկնարկած իշխանափոխութեան գործընթացն է, ուստի այնտեղ Մոսկովեան հռչակագիրը արժանացել է համեստ եւ ընդհանուր առմամբ դրական գնահատականի:

Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներ Դմիտրի Մեդվեդեւը, Սերժ Սարգսեանն ու Իլհամ Ալիեւը հռչակագրում ընդգծել են, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը պէտք է կարգաւորուի քաղաքական ճանապարհով, եւ հաստատուել են ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի միջնորդական ջանքերի շարունակման կարեւորութիւնը:

Jane's Intelligence-ի վերլուծաբանները նշում են, որ հայ-ադրբեջանական շփման գծում մարտի սկզբին տեղի են ունեցել լուրջ բախումներ, գոհուել է առնուազն 16 զինուոր: Յունիսին Ադրբեջանում տեղի է ունեցել խոշոր զորահանդէս՝ առաջինը 1992 թուականից ի վեր: Դրա ընթացքում ցուցադրուել են իսրայէլից գնումներ TAR 21 Tavor մակնիշի ինքնաձիգները, IMI Lynx տեսակի հրթիռային կայանքները, անօդաչու ինքնաթիռները, նախկին խորհրդային պետութիւններից գնուած հրետանու նոր համակարգեր եւ հրթիռներ:

Օգոստոսին վրացական ուժերը ներխուժել են Հարաւային Օսիա: Ադրբեջանում նախ հաւանութիւն են տուել դրան՝ այդ երկրի արտագործնախարարութիւնը ընդգծել է, թէ իրենք էլ ունեն ուժի դիմելու իրաւունք: Սակայն Հարաւային Օսիայում ռուսների պատասխան գործողութիւնները Ադրբեջանին ստիպել են վերանայել այդ մօտեցումը:

Ըստ Jane's Intelligence-ի, Ղարաբաղի նկատմամբ այս պահին չկան նոր սպառնալիքներ Ադրբեջանի կողմից, քանզի այդ երկրում

հասկացել են, որ Հայաստանի հետ պատերազմը կարող է հանգեցնել Ռուսաստանի միջամտութեանը:

Մոսկովեան հռչակագիրը, առաջին հայեացքից, ընդամենը փաստում է, որ կողմերը հակուած են բանակցային լուծում տալ հակամարտութեանը: Փաստաթուղթում չկան այնպիսի ձեւակերպումներ, որոնք կարելի կը լինէր մեկնաբանել իբրեւ գիշում Հայաստանի կամ Ադրբեջանի կողմից:

Եւ այնուամենայնիւ, Jane's Intelligence-ի վերլուծաբանները մոսկովեան եռակողմ հռչակագիրը համարում են կարեւոր զարգացում դարաբաղեան խաղաղ գործընթացում, քանի որ մինչ այդ միայն 1992 թուականին են երկու երկրների ղեկավարները՝ խորհրդարանների նախագահներ Լեւոն Տէր-Պետրոսեանն ու Յաղուբ Մամեդովը իրանի միջնորդութեամբ ստորագրել համատեղ յայտարարագիր, իսկ 1994 թուականին հրադադարը կնքել են աւելի ցածր դիրք գբաղեցրած պաշտօնեաներ:

Հռչակագրի առաւել կարեւոր նշանակութիւնը Ռուսաստանի դերակատարութեան կարեւորումն է: 90-ականներին էլ Ռուսաստանը փորձել է Հարաբաղի խնդրում ներկայացնել միակողմանի նախաձեռնութիւններ, սակայն դրանք, ի վերջոյ, «ստորպեղահարուել են» ԱՄՆ-ի կողմից, քանի որ վաշինգտոնը ամէն կերպ ձգտել է խափանել հակամարտութեան գոտում խաղաղապահ առաքելութեան նպատակով ռուսական ուժեր տեղակայելու հնարաւորութիւնը:

Այս դէպքում ԱՄՆ-ը եւ եւրոպական ի պաշտօնէ ողջունել են ռուսական դիւանագիտութեան ջանքերը, ինչը բացատրում է ոչ միայն ուշադրութիւնը վաշինգտոնում իշխանափոխութեան վրայ սեւեռուած լինելու իրողութեամբ, այլեւ վրաստանեան ճգնաժամից յետոյ Կովկասում արտաքին քաղաքականութեան ասպարէզում նոր գլխացաւանքից խուսափելու ձգտմամբ:

Հեղինակաւոր վերլուծական կենտրոնն այսպիսի եզրակացութեան է յանդու. - «Մոսկովեան հռչակագիրը չի նշանակում, որ Ադրբեջանն ու Հայաստանը մօտ են խաղաղութիւն կնքելուն, բայց այն երաշխաւորել է ստատուս-քվոն, եւ Ղարաբաղի շուրջ նոր պատերազմն այժմ շատ աւելի անհաւանական է թուում: Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ լարուածութեան թուլացումն ու Ադրբեջանի նուազ յարձակողականութիւնը վերականգնում են ապագայում յարատեւ կարգաւորման հասնելու յոյսը»:

«ԱՌԱՒՕՏ»

ՄԱՅՆԴՈՐՖԻՑ ԱՌԱՋ ԵՒ ՅԵՏՈՅ

Շարունակուած էջ 2-էն

կոնստրուկտիւ ներուժ չպարունակելով, պարզապէս նպատակ է ունեցել փոքրիշատէ բարձրացնել միջնորդներից մեկի՝ Ռուսաստանի հեղինակութիւնը, որը նկատուի որէն սասանուել էր վրաստանեան դէպ-

ՀԱՅԱԿԱՆ ՔԵԱՆԴՐԱԶՈՒԹԻՒՆ

Շարունակուած էջ 2-էն

օրէն կը հարուածի հենց ձեզ՝ եւրոպացիներին: Եւ ընդհանրապէս. եթէ կարծում էք հեշտ է Հայաստանի նման երկիր ղեկավարելը եւ Ղարաբաղի խնդրի նման

քերից յետոյ: Այստեղ, սակայն, առաջ է գալիս յաջորդ հարցը՝ որ քանով այդ մեռելածին Հռչակագիրը ի վիճակի կը լինի շտկել Կրեմլի հեղինակութեան հետ կապուած խնդիրները:

գորդեան հանգոյց քանդելը՝ եկէք եւ ինքներդ նախագահէք: Այնպէս որ, եթէ ուզում էք հարցը լուծուի, աջակցէք ինձ ու մի շտապեցրէք: Օքէ՞ն:

«ՀՐԱՊԱՐԱԿ»

ՀԱՅ ԵՒ ՅՈՅՆ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԾԵԾԿՈՏՈՒՔԸ ԱՆՐԵՏԵՒԱՆՔ ՉԻ ՄԱՑԵԼ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Երուսաղէմի Քրիստոսի Յարութեան տաճարում նոյեմբերի 9-ին հայ եւ յոյն հոգեւորականների միջեւ տեղի ունեցած ձեռնկոտուքի հետեւանքով, Իսրայէլի ոստիկանութիւնը հայ հոգեւորականներին արգելել է այսուհետ Գիւլտ խաչի տօնը նշելիս մասնել տաճար, եթէ դա չեն թոյլատրում յոյն հոգեւորականները: Այդ մասին այսօր Երեւանում լրագրողներին յայտնեցին դէպքերի ակնատես հայ հոգեւորականները եւ ուխտագնացները:

«Մեր միաբանութեան բոլոր փորձերը՝ կոնտակտների գնալ յունական կողմի հետ, ուշադրութեան չեն արժանանում», - ասաց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գերագոյն հոգեւոր խորհրդի անդամ Արտակ Գրիգորեանը, ով նոյնպէս Նոյեմբերի 9-ի միջադէպի ակնատեսն է եղել: - «Երուսաղէմի յունական պատրիարքը մեր միաբաններին անուանել է հերետիկոսներ եւ խզել բոլոր տեսակի համագործակցութիւնը մեզ հետ: Մենք մէկ ամիս փորձում ենք կոնտակտի դուրս գալ յոյների հետ, որպէսզի յաջորդ տօնին կարողանանք յստակ կարգաւորուած, առանց կոնֆլիկտների գնալ, բայց չի ստացուում»:

Արարատեան հայրապետական թեմի քահանայ Մխիթար Արտեանը

ակնկալում է Հայաստանի արտագործնախարարութեան եւ Ամենայն հայոց կաթողիկոսի միջամտութիւնը. - «Մեր արտաքին գործերի նախարարութիւնը Իսրայէլի արտաքին գործերի նախարարութեան հետ պէտք է խօսի, որպէսզի իրենց կառավարութիւնը ինչ-որ ձեւով ազդի ոստիկանութեան վրայ, որովհետեւ ոստիկանները կողմնապահ են: Ամենայն հայոց կաթողիկոսն էլ Յունաց տիեզերական պատրիարքի հետ պէտք է խօսի: Հակառակ այն բանի, որ Երուսաղէմի [յունաց]պատրիարքութիւնը անկախ է, Տիեզերական պատրիարքը կարող է ազդել, եւ այս կուրսները վերանան, որովհետեւ, բնականօրէն, տհաճ է Քրիստոսի գերեզմանի վրայ հոգեւորականների կուլ անելը»:

Ծեռնուտուքը սկսուել էր, երբ հայ հոգեւորականները նշում էին Գիւլտ խաչի տօնը: Այս տօնը Հայ առաքելական եկեղեցին նշում է 4-րդ դարից վեր:

Յոյների պնդմամբ՝ հայերը թոյլ չեն տուել, որ յոյն հոգեւորականներից մէկը մասնի տաճար: Հայերը պնդում են հակառակը՝ որ յոյներն են փակել իրենց ճանապարհը:

Քրիստոսի Յարութեան տաճարի տարածքը բաժանուած է քրիստոնէական վեց եկեղեցիների միջեւ, եւ բախումներն այստեղ հազուադէպ չեն:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԻՆՈՎԱՏՏԸ 5,7 ՑԵՆՏՈՎ ԷԼԵԿՏՐՈՒՆԵՐԳԻԱ Կ'ԱՐՏԱՅԱՆԻ ԹՈՒՐՔԻԱ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Յաջորդ տարուայ Մարտի 1-ից կ'իրականացուի հայկական էլեկտրաէներգիայի արտահանումը Թուրքիա: Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Արմէն Մովսիսեանը այսօր լրագրողներին յայտնել է, որ Հայաստանի էներգետիկ ենթակառուցումները հիմնականում պատրաստ են էլեկտրաէներգիայի մատակարարմանը Թուրքիա եւ ծրագրի իրագործելու համար դեռեւս որոշակի աշխատանքներ պէտք է կատարի թուրքական կողմը:

«Մի քանի օր առաջ եմ ինֆորմացիա ստացել թուրքական կողմից, որ աշխատանքները նորմալ գնում են, եւ նախանշուած ժամկէտներում կը սկսենք էլեկտրաէներգիայի արտահանումը», - տեղեկաց-

րեց Արմէն Մովսիսեանը: Էլեկտրաէներգիայի արտահանման մասին համաձայնութիւնը ձեռք էր բերուել Թուրքիայի նախագահ Աբդուլա Գիւլի երեւանեան այցի ժամանակ:

Ըստ հայկական կողմի՝ էլեկտրաէներգիայի գինը տնտեսապէս արդիւնաւէտ կը լինի եւ կախուած կը լինի ջերմային էներգիայի եւ գազի գներէ: Եթէ մատակարարումը իրականացուի այսօր, գինը մէկ կիլովատտի համար կը կազմի 5,7 ցենտ (մօտ 17,5 դրամ):

Նախնական պայմանաւորուածութեան համաձայն, արտահանման ծաւալը կը կազմի տարեկան 1,5 միլիարդ կիլովատտ ժամ՝ հետագայում հասնելով տարեկան 3,5 միլիարդ կիլովատտ ժամի:

ՀԱՄԱՐՊՈՐԿ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ՄԵԿՆԱԾ Է ՀԻԱՍԹԱՓՈՒԱԾ

Շարունակուած էջ 2-էն

կը հիասթափեցնեն»:

Համամարպըրկ անդրադարձաւ է նաեւ Ազգային Անվտանգութեան Ծառայութեան (ԱԾԾ) կողմէ՝ ազատագրկուածներու, որոնց շարքին ընդդիմութեան ներկայացուցիչներու հեռախօսագրոյցներու հրատարակման. «Բացարձակապէս անընդունելի է այն հեռախօսագրանգերու արձանագրութիւններու հրատարակումը, որ կատարած էր ԱԾԾ-ն: Օրէնքի իշխանութեան երկրի մէջ այդ ընդունելի չէ, եւ բացարձակապէս կը խախտուի մարդու անձնական տուեալներու անձեռնմխելիութեան իրաւունքը»:

Համամարպըրկ վստահեցուցած է, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը եւ Թուրքիոյ հետ Հայաստանի յարաբերութիւնները որեւէ ձեւով չեն անդրադառնար իր եւ իր կառույցի կարծիքի վրայ՝ Մար-

տի 1-ի դէպքերու հետ կապուած. «Քանի որ խօսքը մարդու տարրական իրաւունքի մասին է, որու խախտումը որեւէ կերպով հանդուրժելի չէ»:

Թոմաս Համամարպըրկ նշած է որ, գեկոյցներ ստացած է դատավարութիւններու ընթացքին վկաներու նկատմամբ ճնշումներու գործադրման վերաբերեալ: Ան ուշադրութիւն դարձուցած է այն հանգամանքին, որ շարք մը գործերով մեղադրանքներ առաջադրուած ու դատավիճիւններ կայացուած են բացառապէս ոստիկան վկաներու ցուցմունքներու հիման վրայ, եւ ընդգծած է, որ ոստիկաններու ցուցմունքները չպէտք է անտեսուին, սակայն այն պարագաներուն, երբ կայ բախում ոստիկանութեան եւ ցուցարարներու միջեւ՝ անհրաժեշտ էին նաեւ լրացուցիչ ապացոյցներ եւ ցուցմունքներ:

121-ԱՄԵԱԿ

ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 121-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Շարունակում է 1-ին

Հնչակեան քայլերգներու երգեցողութեամբ, որմէ ետք բացման խօսք կատարեց օրուայ հանդիսավար՝ Ընկերուհի Լենա Մանուկեան: Ան կուռու հակիրճ կերպով անդրադարձաւ ձեռնարկի իմաստին եւ կարեւորութեան:

«Այսօր կը նշենք փառապանծ Մայր կուսակցութեան 121 ամեակը եւ կը տօնենք անոր վեհ գաղափարախօսութիւնը: Կը տօնենք Հնչակեան ըլլալու գիտակցութիւնը եւ



Խանդիսավար՝ Լենա Մանուկեան

հանդիսավար՝ Լենա Մանուկեան
Հնչակեան մնալու թանկագին պարտականութիւնը: Այսօր կը խոնարհինք մեր արմատներուն: Կ'երթանք անցեալ՝ «Մարօ»ներու եւ «Փարամք»ներու տեսլականով եւ կու գանք մինչեւ այսօր:

«Տակաւին մեր յիշողութիւններու մէջ թարմ են անցնող տարուայ 120 ամեակի փառաշուք սօնակատարութիւնները: Անցնող մէկ տարուայ ընթացքին բազմապատկուած են մեր պատասխանատուութիւնները եւ պարտականութիւնները, սակայն ի՞նչ տարբերութիւն, չէ որ մենք լաւ գիտենք թէ ճանապարհը սահուն պիտի չըլլայ: Գիտենք, պաշարի սահմանումը: Մենք ժողովրդասէր ենք եւ արդարութիւնը սիրող:

«Այսօր մենք այդ բոլորը կը վերահաստատենք, կառչած կը մնանք մեր հիմնադիրներու ժառանգութեան, մեր հաւատքին ու գաղափարին, հայ ըլլալու եւ հայ մնալու թանկագին պատասխանատուութեան եւ մեր ժողովուրդի իրաւունքները պաշտպանելու հօր եւ սուրբ պարտականութեան», - ըսաւ Ընկերուհի Մանուկեան:


Ապա ելոյթ ունեցաւ Հայ Ազգային Գոնկրէսին մաս կազմող Ժողովրդավար Հայաստան Միաւորումի ղեկավար իրաւաբան Կարօ Կարապետեան, որ գնահատանքով արտայայտուեցաւ Ս.Դ.Հ.Կ.ի ընդհանուր քաղաքական կեցուածքին եւ որդեգրած ուղղութեան, Հայաստանի եւ հայ ժողովուրդի առջեւ ծառայող հարցերու նկատմամբ: Նաեւ փոխանցեց Հ.Ա.Գ.ի ողջոյնները Ս.Դ.Հ.Կ.ի 121 ամեակի առթիւ եւ մարտի 29-ը նորանոր յիշողութիւններ կուսակցութեան ապագայ գործունէութեան: (Ելոյթը կարդալ էջ 8-ի վրայ):

Հնչակեան կուսակցութեան խօսքը փոխանցելու համար բեմ հրաւիրուեցաւ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինի ատենապետ ընկ. Տօքթ. Համբիկ Սարաֆեան: Ան անդրադարձաւ Ս.Դ.Հ.Կ.ի եւ հայ

ժողովուրդի առջեւ ներկայացող մարտահրաւերներու եւ զանոնք դիմաւորելու անհրաժեշտութեան: (Ընկ. Սարաֆեանի ելոյթը կարդալ էջ 8-ի վրայ):

Օրուայ գլխաւոր բանախօսը ներկայացուց ՄԴՀԿ Վարիչ Մարմինի անդամ Ընկ. Սուրէն Խուտինեան:

Հիւր բանախօսը ունեցաւ ելոյթ մը, գոր ուղղակի կարելի է նկարագրել իբրեւ պատմական, այժմէական, իրապաշտ եւ կառուցողական կերպով, քննադատական Հայաստանի ներկայ իշխանութեանց եւ Հայաստանէն ներս տիրող ներկայ կացութեան վերաբերեալ: Բանախօս ընկերը ուղղակի մագնիսացուց ներկայ հասարակութիւնը իր ելոյթի ճշգրիտ տեղեկութիւններով, մեր հայրենիքի քաղաքական, ընկերային, տնտեսական եւ միջազգային փոխ-յարաբերութեանց վերաբերեալ: Թէ՛ն որոշ յոռետեսութեան առաջնորդող մանրամասնութիւններ տրուեցան եւ նշուեցան հայ ժողովրդի առջեւ ներկայացող մարտահրաւերներու ցանկ մը, բաւականին երկար, եւ սակայն բանախօս ընկերը շեշտեց որ այդ մարտահրաւերները անյաղթահարելի չէին, եւ եթէ հայութեան երեք հատուածները, Հայաստան, Ղարաբաղ եւ արտասահման, իրարու հետ իրապէս կապուէին միասնական անկեղծ տրամադրութիւններով, յիշուած մարտահրաւերները անպայմանօրէն պիտի լուծուէին հայութեան ի նպաստ: Ընկ. Շիրխանեան խօսքի սկզբնաւորութեան Հայաստանի



Վարիչ Մարմինի անդամ Սուրէն Խուտինեան

Հնչակեանութեան անունով շնորհաւորելէ ետք Կուսակցութեան փառապանծ տարեդարձը, յայտարարեց որ եկած է շարք հարցերու պատասխաններ ստանալու:

«Գիտէք, որ Հայաստանում ներքաղաքական իրավիճակը աւելի քան լարուած է, որ Արցախեան ինդրի շուրջ պտտուած են խիստ հակասական ու մտահոգիչ լուրեր, ուստի ես խօսելու եմ Հայաստանի եւ Կուսակցութեան այսօրուայ անելիքների մասին: Յաճախ չի, որ հնարաւորութիւն է ընձեռնուում հանդիպել սփիւռքի ամենակազմակերպուած, ամենամարտական համայնքի հետ եւ ես ակնկալում եմ իմ անկեղծ հարցադրումներին ստանալ նոյնքան անկեղծ պատասխաններ ձեզանից»:

Խօսելով միասնականութեան գաղափարի մասին բանախօսը ըսաւ. «Պատմութիւնը հագուադէպ է շանս տալիս եւ դրանից ջօզուուելը անդարձելի կորուստներ է բերում: Իսկ միասնութիւնը պէտք է լինի



Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան

եռամիասնութեան տեսքով: Այսինքն, բուն Հայաստանի հասարակութեան միասնութիւն, Հայաստան-Արցախ միասնութիւն եւ Հայաստան-Սփիւռք միասնութիւն: Խորը ցաւ եմ ապրում այն փաստից, որ այսօր արդէն, այս երեքից եւ ոչ մէկը չունենք: Ասել, թէ այս ցաւալի իրավիճակը չունի պատճառներ եւ բացատրութիւն, սխալ կը լինի: Հայաստանը եւ Սփիւռքը հաղորդակցուող անօթներ են եւ այդ երկու անօթների հաղորդակցման գլխաւոր կազմակերպիչը պէտք է լինի իշխանութիւնը, որը դրանով չի զբաղոււմ, որովհետեւ ունի աւելի կարեւոր խնդիրներ՝ կեղծել ընտրութիւններ, բռնանալ ընդդիմութեան վրայ»:

Անդրադառնալով դարաբաղեան հարցին բանախօսը ըսաւ. «Արցախեան ինդրի խաղաղ կարգաւորման գործընթացում դիւանագիտական պարտութիւնը սպառնում է կորցնել ազատագրուած Արցախը: Հայաստանը ճանաչուել է ազրեսոր երկիր եւ միջազգային կառուցները սպառնում են կիրառել սանկցիաներ:



Պապին Պօղոսեան

«Հայաստանը օր-օրի աւելի է մեկուսացոււմ եւ կորցնում տարածաշրջանային, եւ միջազգային ինտեգրման վերջին հնարաւորութիւնները:

«Կեղծիքի եւ բռնութեան միջոցով Հայաստանում իշխանութիւն գաւթելը սպառնում դառնալ մշտական կանոն եւ պետական համակարգ: Խորը համակարգային ճգնաժամի եւ շարունակական արտագաղթի պահանջումը, կոռուպցի-

ան, վարչական, դատական բռնութիւնները դարձել են ժողովրդի դիմադրութիւնը կոտորելու եւ իշխանութիւնը պահելու հիմնական միջոցներ»:

Հայ թրքական սահմանի բացման յաջորդելիք դժուարութիւններու մասին խօսելով Վահան Շիրխանեան ըսաւ. «Մեր ինչի՞ն է պէտք թուրքական սահմանի բացումը երբ, Հայաստանը չունի արտահանման ենթակա մրցունակ ապրանք: Հայաստանի ներքին արտադրողը չի կայացել եւ կայունացել: Հայաստանի քաղաքացին, ներքին արտադրողը պաշտպանուած չի համապատասխան իրաւական, հարկային եւ մաքսային օրէնսդրութեամբ: Հայ հասարակութեան ներկայ բարոյահոգեբանական վիճակը, դժուար թէ թոյլ տա դիմադրել թուրքական ֆինանսա-տնտեսական էքսպանսիային: Հայաստանը չունի ժողովրդին հաշուետու եւ նրան ծառայող իշխանութիւն:

«Քանի դեռ այս խնդիրները լուծուած չեն, երկիրը տարիներ շարունակ քայքայող, ամայացնող համակարգային ճգնաժամը չաղթահարուած չի, իրատեսութիւնը պար-



Գրիգոր Օգարեան

տադրուած է հայկական կողմին այդ սահմանը փակել աւելի ամուր, քանը թուրքիան է փակել: Այսպիսին է Հայաստանի Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան տեսակէտը»:

Բանախօսին ելոյթը ընդունուեցաւ խանդավառ ծափահարութիւններով:

Հանդիսութիւնը աւարտեցաւ Յովնան Արք. Տէրտէրեան փակման խօսքով, որու ընթացքին Սրբազան Հայրը շնորհակարան Կուսակցութիւնը՝ իր 121-ամեակի առթիւ: Առաջնորդ Սրբազանը, ներկաներուն փոխանցեց ներշնչուած պատգամ մը երազներու կարեւորութեան եւ զանոնք հետապնդելու անհրաժեշտութեան մասին:

Երեկոյի գեղարուեստական բաժնով, գեղեցիկ եւ խանդավարիչ երգերով եւ ասմունքով ելոյթներ ունեցան երգիչներ Պապին Պօղոսեան, հիւր երգիչ Լոնտոնէն՝ Սամուէլ Վարդանեան եւ ասմունքող Գրիգոր Օգարեան:

Ս.Դ.Հ.Կ.ի 121 ամեակի շքեղ հանդիսութիւնը մեծապէս տպաւորեց ներկայ հասարակութիւնը, եւ անոր փոխանցեց հայ ժողովուրդի ներկայիս դէպի աւելի լաւ ապագայի մը համար յոյսի եւ հաւատքի անհրաժեշտութիւնը:

121-ԱՄԵԱԿ

ՍԴՅԿ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՎԱՅԱՆ ՇԻՐԽԱՆԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ

Հոգեշնորհ Սրբազան հայր, մեծարգոյ հիւրեր, յարգարժան ընկեր Աճեմեան, յարգելի հայրենակիցներ: Ընդունէք Հայաստանի բոլոր Հնչակեանների ջերմագին շնորհաւորանքները կուսակցութեան փառապանծ 121 ամեակի կապակցութեամբ:

Պատկառելի տարիք է, բայց ես համոզուած եմ, որ առջեւում աւելի երկար ճանապարհ կայ, մեծ է վաստակը ազգի առջեւ, բայց անելիքները աւելի շատ են:

Լինելով շատ երիտասարդ Հնչակեան, կուսակցութեան փառաւոր անցեալի ու վաստակի մասին խօսելու իրաւունք ինձ չեմ վերապահում: Գիտէք, որ Հայաստանում ներքաղաքական իրավիճակը աւելի քան լարուած է, որ Արցախեան խնդրի շուրջ պտտում են խիստ հակասական ու մտահոգիչ լուրեր, ուստի ես խօսելու եմ Հայաստանի եւ կուսակցութեան այսօրուայ անելիքների մասին: Յաճախ է, որ հնարաւորութիւն է ընձեռնուում հանդիպել սփիւռքի ամենակազմակերպուած, ամենամարտական համայնքի հետ եւ ես ակնկալում եմ իմ անկեղծ հարցադրումներին ստանալ նոյնքան անկեղծ պատասխաններ ձեզանից:

Ինչն է մեզ միաւորում եւ ինչն է բաժանում: Մենք բոլորս հայեր ենք, ծնունդ ենք հայ ծնողներից, որոնք նոյնպէս ծնունդ են հայ ծնողներից ու այդպէս, հազարամեակների ու դարերի խորքերից, այսօր հասել ենք այստեղ: Ուրեմն մեզ միաւորող կառուցողն յատկանշող հայ լինելն է: Մեզանից ամէն մէկը ունի իր փոքրիկ Հայրենիք-ծննդավայրը, որը չափազանց սիրելի ու քաղցր անկիւն է, բայց մենք բոլորս միասին ունենք մէկ Հայրենիք եւ դա Հայաստանն է, որը հայի անցեալի, ներկայի եւ ապագայի երաշխաւորն է: Սա մեզ միաւորող երկրորդ կարեւորագոյն յատկանիշն է՝ Հայրենիքը: Մեզ միաւորում է քրիստոնէական հաւատը եւ Առաքելական եկեղեցին: Հաւատը մեզ միաւորող երրորդ կարեւորագոյն յատկանիշն է:

Մենք բոլորս անցել ենք Հայոց պատմութեան պանծալի յաղթանակների, անպատուաբեր պարտութիւնների, դաւաճանութիւնների ու դառը ցեղասպանութեան ճանապարհով: Մեր ուղեգրում, սրտում, արեան մէջ ամրագրուած է մի յիշողութիւնը, որը մեզ պարտադրում գործել նոյն ուղղութեամբ, նոյն դաշտում: պատմական յիշողութիւնը: Սա եւս մեզ միաւորող կարեւորագոյն յատկանիշն է:

Ինչն է մեզ բաժանում: Տարածութիւնը: Տարածութիւնը քաղաքական, պետական, սոցիալական, իրաւական, հոգեւոր-դաստիարակչական իմաստով, այլ ոչ թէ միայն մղոնների, կամ կիլոմետրերի: Սա մեզ տարանջատող կարեւորագոյն հանգամանքն է: Մեզ բաժանում է պարտքի բեռի զգացողութեան, իրականութեան ընկալման եւ իրադարձութիւններին մասնակցութեան աստիճանը: Սա մեր տարանջատուածութեան երկրորդ կարեւորագոյն հանգամանքն է: Մեզ տարանջատում է ձեր եւ մեր օրանդիւրները տարբերութիւնը: Սա էլ վերջինը: Ուրեմն, մեր հայրենի խնդիրը կայանում նախ, մեզ միաւորող յատկանիշներ

րի ամրապնդման, միասնականացման, միաձուլման, եւ երկրորդ՝ մեզ տարանջատող հանգամանքների մեղմման, թուլացման եւ վերացման մէջ: Սա պարզ տրամաբանութիւն է, բայց նաեւ օրուայ հրամայական: Չմոռանանք մի կարեւոր հանգամանք՝ հայազգի թշնամին աշխատում է ուղիղ հակառակ ուղղութեամբ, այսինքն՝ թուլացնել կապող օղակները, ամրապնդել բաժանող օղակները:

Ես այստեղ ներկայացնում եմ ոչ միայն Հայաստանի Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը, որին անդամագրուել եմ այս տարուայ Մարտի 2-ին՝ ազգադաւ սպանդի յաջորդ օրը, այլեւ հայազատամարտիկների մի հսկայական բանակ: Բայց ես այստեղ ներկայացնում եմ նաեւ ինձ՝ Վահան Շիրխանեանիս, որը ունի բազմաթիւ հարցերին պատասխան ստանալու խնդիր եւ պարտականութիւն:

Պատերազմի ամենաթէժ պահերին, շուրջս փնտռել եմ սփիւռքահայերի: Բայց տեսել եմ նոյն աշտարակցի, ապարանցի, լուռցի գանգեզուրցի ու երկու տասնեակ ֆրանսիացի՝ եւ լիբանանցի հայ կամաւորականներին: Հայաստանից երկու անգամ աւել, այսօր արդէն 5 անգամ աւել բնակչութիւն ունեցող Սփիւռքը միթէ այդ 2 տասնեակով պէտք է ներկայացուած լինէր: Ամէն մի գոհի, կորստի կարեւոր պատճառներից մէկը համարել եմ հայութեան իրական միասնութեան բացակայութիւնը: Ինչու՞ մենք պէտք է գիջէինք թշնամուն թուով, ունենայինք սպառազինութեան, թիկունքի ապահովման եւ զինուորական մասնագէտների պակաս ու այդ բոլորը լրացնէինք ինքնագործութեան գնալու ոգով ու պատրաստակամութիւնով: Ինչու՞ Ռուսաստանից, Ղազախստանից, Բելոռուսից 12 զենեքաւոր եւ հարիւրաւոր բարձրաստիճան սպաներ թողեցին իրենց ծառայութիւնը եւ մտան Հայաստանի նոր-նոր ստեղծուող բանակ, իսկ ԱՄՆ-ից, Եւրոպայից ոչ մէկը: Ինչու 2-րդ Համաշխարհայինում այստեղ՝ ԱՄՆ-ում կարողացանք հաւաքել մի ամբողջ գունդ Գերմանիայի դէմ, իսկ Ղարաբաղեան ազատամարտում նոյնիսկ մի վաշտ չհաւաքուեց: Չէ՞ որ սա մեր պատերազմն էր, սա Հայ Դատի յայտարարած հողահաւաք պատերազմն էր: Այո, յաղթեցինք, տարով 6400 զոհ եւ 14000 վիրաւորահաշմանդամներ: Մեր դէմ կուռում էին 100-ից աւել արուան մոջահիդներ, չեչենական ջոկատներ, մուսուլման արաբներ եւ թուրք «գորշ գայլեր, այսինքն մօտ 2000 մուսուլմաններ» ոչ ադրբեջանցիներ: Ինչու՞ մենք կանգնեցինք Ադրբեջանում եւ չչարժուեցինք դէպի Գանձակ, Նախիջեւան: Չէ՞ որ սրանք մեր հողերն են, իսկ թշնամին փախչում էր: Կանգնեցինք, որովհետեւ ինքներս ուժասպառ էինք եղել: Որովհետեւ մենակ էինք: Պատերազմը համահայկական չդարձաւ: Ինչու՞ սփիւռքահայ երիտասարդները չլցուեցին ինքնաթիռները, նաւերը եւ չուղեւորուեցին պատերազմի դաշտ: Համոզուած եմ, որ այս դէպքում յաղթանակը կը լինէր աւելի կատարեալ, կորուստները աւելի քիչ:

Այս երեւոյթի հոգեբանական, փիլիսոփայական վերլուծութիւնը

ցոյց կը տայ, թէ հայ ազգը իվիճակի՞ է ընդհանրապէս միաւորուելու, թէ՞ ոչ: Իհարկէ, հարիւրաւոր հայեր օգնում էին թիկունքային, հումանիտար հարցերով, նաեւ ձեզանից, այստեղ գտնուողներից շատերը, բայց միասնական հայութիւնը, որպէս համակարգ, չկայացաւ ու չկայ այսօր: 1949 թուականին, անկախութեան համար պատերազմող Իսրայէլ ներգաղթեցին 100000 հրեայ, իսկ 1949-1953 թուերին 686 հազար հրեայ: Ցաւօք, չեմ կարող որեւէ թիւ ասել մեր մասին: Արդարացման պատճառաբանումներ միշտ կը գտնուեն: Դուք կ'ասէք, որ նոր իշխանութիւնը անազնիւ է վարուել առանձին սփիւռքահայերի հետ, նրանք կ'ասեն, որ պատրուակներ են փնտռում, կամ մէկ ուրիշ բան: Պատճառաբանումներ շատ կը գտնուեն: Այստեղ բողոքել չի կարող միայն ամենատուժող կողմը՝ Հայրենիքը: Եթէ որդիները հիւանդ ծնողին չեն խնամում, ապա վերջինս չի բողոքում, այլ պարզապէս մաշուում եւ մահանում է:

Վստահ եմ, որ ձեր մէջ կը լինեն մարդիկ, որոնք տեսել են, թէ ինչպէս է մահանում գիւղը: Սկզբում, հայրենի գիւղից հեռանում են երիտասարդ շրջանաւարտները, յետոյ՝ աշխատունակ տղամարդիկ՝ ընտանիքով: Գիւղում մնում են ծերերը, որոնք բնութեան սահմանած կարգով մահանում են եւ երբեմնի շէն ու բարեկեցիկ օջախները վերածուում են ամալացած աւերակների: Այսպիսին է այսօր Հայաստանը:

Պատմութիւնը հազարադէպ է շանս տալիս եւ դրանից չօգտուելը անդարձելի կորուստներ է բերում: Իսկ միասնութիւնը պէտք է լինի եռամիասնութեան տեսքով: Այսինքն, բուն Հայաստանի հասարակութեան միասնութիւն, Հայաստան-Արցախ միասնութիւն եւ Հայաստան-Սփիւռք միասնութիւն: Խորը ցաւ եմ ապրում այն փաստից, որ այսօր արդէն, այս երեքից եւ ոչ մէկը չուենք: Ասել, թէ այս ցաւալի իրավիճակը չունի պատճառներ եւ բացատրութիւն, սխալ կը լինի: Հայաստանը եւ Սփիւռքը հաղորդակցուող անօթներ են եւ այդ երկու անօթների հաղորդակցման գլխաւոր կազմակերպիչը պէտք է լինի իշխանութիւնը, որը դրանով չի զբաղում, որովհետեւ ունի աւելի կարեւոր խնդիրներ՝ կեղծել ընտրութիւններ, բռնանալ ընդդիմութեան վրայ: Իսկ սրանք ծանր եւ աշխատատար պրոցէսներ են, պահանջում են յատկ համակարգերի ստեղծում եւ պահպանում: Էլ ե՞րբ զբաղուեն միասնութեան կերտումով: Այո, նախ՝ իշխանութիւնը, այնուհետեւ կուսակցութիւնները: Դաշնակցութիւնը 11 տարի լինելով իշխանութեան կարեւոր մաս, ոչ միայն չիրականացրեց որեւէ ազգային ծրագիր, այլեւ չհասկացաւ, որ Հայ Դատի խնդիրների լուծմանը կարելի է հասնել միայն համահայկական միասնութեան առկայութեան դէպքում:

Բայց այս բոլորը չի նշանակում որ ՍԴՀԿ-ն պէտք է հաշտուի այս իրողութեան հետ: Ես անդամագրուել եմ հնչակեան կուսակցութեանը, որովհետեւ համոզուել եմ, որ այս կուսակցութիւնը միակն է, որը պահպանել է ազգային էութիւնը, նուիրուածութիւնը

Հայոց խնդիրներին եւ կարող է իր վրայ վերցնել համախմբման պատմական միախաչի իրականացման բեռը:

Հայաստան-Սփիւռք միասնութիւնը բնաւ չի սկսում եւ աւարտում ֆինանսական օգնութիւն կամ ներդրում կատարելով: Այդ միասնութեան խնդիրը պէտք է լինի միասնաբար ժամանակակից, հզօր, արդար, իրաւական երկիր կառուցելը: Ոչ թէ արտագաղթի, այլ հայրենադարձութեան երկիր դարձնելը: Ոչ թէ կամայականութեան, այլ օրէնքի երկիր: Երկիր, որը կառուցուի եւ զարգանայ համայն հայութեան մտաւոր եւ գործնական ներուժի օգտագործման հիմքի վրայ, նրա ստեղծագործական հզօր նախաձեռնութեան վրայ:

Այո, Հայաստան-Սփիւռք միասնութիւնը կարեւորագոյն խնդիրներից մէկն է: Այդուհանդերձ, համահայկական միասնութեան կայացումը

գլխաւոր երեք խնդիրներից միայն մէկի իրականացումը: Այդ երեք խնդիրներն են.

Հայաստանը պէտք է դառնայ իրաւական, ժողովրդավարական, սոցիալական արդարութեան երկիր:

Հայութիւնը պէտք է լինի միասնական:

Հայ Դատը պէտք է ստանալ իր արդար լուծումը:

Սրանք միմեանց հետ շաղկապուած, անբաժանելի խնդիրներ են ու այս խնդիրների իրականացումը պէտք է իմաստաւորի ամէն մի հայի կեանքը, քանզի առանց դրա վտանգում է հայ մարդու, հայ ընտանիքի, հայ սերունդի ապագայ գոյութիւնը:

Առաջին խնդիրը Հայաստանն է, որի գլխին առ այսօր սպառնալիքները միայն աւելանում են: Համոզուած եմ, որ ձեզանից ամէն մէկը կարող է աւելացնել մարտահրաւէրների եւ սպառնալիքների իմ թուարկած ցանկը: Ներկայացնեմ միայն գլխաւորները:

Արցախեան խնդրի խաղաղ կարգաւորման գործընթացում դիւանագիտական պարտութիւնը սպառնում է կորցնել ազատագրուած Արցախը:

Հայաստանը ճանաչուել է ագրեսոր երկիր եւ միջազգային կառուցները սպառնում են կիրառել սանկցիաներ:

Հայաստանը օր-օրի աւելի է մեկուսացուում եւ կորցնում տարածաշրջանային եւ միջազգային ինտրաման վերջին հնարաւորութիւնները:

Կեղծիքի եւ բռնութեան միջոցով Հայաստանում իշխանութիւն գաւթելը սպառնում է դառնալ մշտական կանոն եւ պետական համակարգ:

Խորը համակարգային ճգնաժամի եւ շարունակական արտագաղթի պահպանումը, կուռուպցիան, վարչական, դատական բռնութիւնները դարձել են ժողովրդի դիմադրութիւնը կոտրելու եւ իշխանութիւնը պահելու հիմնական միջոցներ:

Ազգային զաղափարախօսութեան, հայապահպանութեան քաղաքականութեան մերժումը եւ բացակայութիւնը այլասերում է հոգեւոր դաշտը, առաջացնում մու-

121-ԱՄԵԱԿ

ՍԴՅԿ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՎԱՅԱՆ ՇԻՐԽԱՆԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ

Շարունակում է 6-էն

տացիաներ, զրկում ծրագրային պետականաշինութեամբ զբաղուելու հնարաւորութիւնից:

Հայաստանը վերադառնում է կուսակցութեան նոր ժամանակաշրջան եւ այդ կուռքը դառնում է դրամը:

Ռուս-Վրացական պատերազմից յետոյ, Անդրկովկասում ազդեցութեան գոտիների վերաբաշխման արդիւնքում Հայաստանին սպառնում է պետականութեան կորուստ:

Ազգային մշակութիւնը եւ հասարակութիւնը գտնուում են ուղղորդուած ինքնաքայքայման պրոցեսում:

Յարատեւ գործազրկութիւնը եւ աղքատութիւնը սրնթաղ գարգացում են թմրամոլութիւնը, մարմնավաճառութիւնը եւ այլ այլաբերումներ, ինչի արդիւնքում հայ աւանդական ընտանիքը ապրում է խորքային հոգեւոր-բարոյական քայքայում:

Ծառն է, մտահոգ է: Այս իրավիճակում, մենք ունենք քաղաքական վարքագծի երկու տարբերակ:

1. Շարունակենք մնալ անտարբեր դիտորդներ, սպասել երբ Ադրբեջանը միջազգային կառույցներին վերջնականորէն կը կաշառի նաւթադոլարներով եւ հետ կը խլի ազատագրուած Արցախը, երբ կը բացուի հայ-թուրքական սահմանը եւ 2-3 ամսում Հայաստանը կը յայտնուի թուրքական ֆինանսա-տնտեսական էքսպանսիայի տակ, երբ լինի նոր Մարտի մէկ, շարունակելով Հոկտեմբերի 27-ի հայրենասպան շղթան, իսկ յետոյ փնտռենք մեղաւորներին: Սա այն է ինչ կայ այսօր: ՍԴՀԿ Հայաստանի վարիչ մարմինը կտրականապէս դէմ է այս վարքագծին:

2. Բարեբախտաբար, այս բոլոր սպառնալիքները դեռ ունեն չէզոքացման, յաղթահարման, լուծման ճանապարհներ, ուստի առաջարկում են որդեգրել այս քաղաքական, ազգային վարքագիծը եւ գործողութիւնների ուղին: Այս դէպքում, մեր գրոյցը ամէն մի սպառնալիքի, վտանգի չէզոքացման ուղղութեամբ, կը լինի խիստ կոնկրետ ու առարկայական:

Մի փոքր մանրամասնենք Արցախի եւ թուրքական սահմանի հարցերը: Մինչեւ 1998 թիւ ԼՂՀ-ն հանդիսանում էր բանակցային կողմ եւ միջազգային նորմերով

կոնֆլիկտը դիտուում էր ներադրբեջանական, իսկ ԼՂՀ-ն՝ անջատողական շարժում: Հայկական դիւանագիտութեան յաջող աշխատանքի, Սփիւռքի հզօր լուրջբիստական աջակցութեան դէպքում Արցախեան ազատմարտը պէտք է ճանաչուէր ազատագրական, ունենալով դրա համար իրաւական աւելի քան լիարժէք հիմնաւորում: Սակայն կատարուեց ուղիղ հակառակը: Քոչարեանը դուրս մղեց ԼՂՀ-ին բանակցային գործընթացից եւ Հայաստանը դարձաւ հակամարտող կողմ: Իրականացաւ այն, ինչի մասին երագում էին Ադրբեջանը եւ թուրքիան: Հայաստանը միջազգային իրաւունքի սուբեկտ է, իսկ Ադրբեջանը կորցրել է 7 շրջան առաւել՝ ԼՂՀ-ն: Բնականաբար, ունենալով մեռած, կամ մեռնող դիւանագիտութիւն Հայաստանը, որպէս կոնֆլիկտի կողմ, ՄԱԿ-ի, Եւրոխորհրդի, մեծ տէրութիւնների ղեկավարների կողմից ճանաչուեց որպէս ազրեսոր եւ էթնիկական գտումներ իրականացրած երկիր:

Ղարաբաղեան խնդրի կարգաւորման նախագծերը պտուտում են 5 սկզբունքների շուրջ՝ ԶՈՒ-ի դուրս բերում, փախստականների վերադարձ, խաղաղապահ ուժերի տեղաբաշխում, Լաչինի միջանցքի ապահովում եւ ԼՂԻՄ-ի նախկին դեմոգրաֆիի պատկերը վերականգնելուց յետոյ, կարգավիճակի մասին հանրագրուէի անցկացում: Միջնորդ կողմերը, նրանց ներկայացուցիչները, բացառապէս ծառայում են անձնական եւ տուեալ կողմի շահերին, մի կողմ դնելով անկողմնակալ լինելու միջազգային պարտաւորութիւնը: Այսպէս, ԱՄՆ նախկին համանախագահ Սթիւենը, յանկարծ դառնում է Կասպիական աւազանի նաւթային պատասխանատու: Ներկայ համանախագահ Մեթիւ Բրայզան, չյոգնելով օր ու գիշեր կրկնել Ադրբեջանի տարածքային ամբողջութեան մասին, օրեր առաջ յայտարարում է, որ մեկնում է Խանքենդի: Պարոն Բրայզա, Ստեփանակերտին նոր անուն է դրել էլէիբեյը 1991 թ. Միաժամանակ լուծարելով ԼՂԻՄ-ը: Նրա այս կամայականութիւնը արժանացել է բոլոր միջազգային կառույցների, մեծ երկրների, այդ թւում՝ ԱՄՆ-ի խստագոյն դատապարտմանը: Դուք սա չգիտէ՞ք, թէ՞ Ադրբեջանին սիրաշահելու խնդիր ունէ՞ք:

Հայաստանի իշխանութիւններ

րի կողմից իրականացուած պասսիվ պաշտպանական, իսկ իրականում պարտաւորական քաղաքականութիւնը յանգեցրել է այսպիսի խայտառակ իրողութեան: Վստահ եմ, որ Հնչակեան կուսակցութեան եւ Կենտրոնական վարչութիւնը, եւ նրա անդամներից որեւէ մէկը նման լուծման հետ չեն համաձայնուի:

Խիստ տարակուսելի զարգացումներ են սկսուել հայ-թուրքական շարաբերութիւններում: Երկիր, որը հակահայ գործողութիւնների դարաւոր ծանրագոյն բեռ ունի իր վզին, վերջին 20 տարում միայն աւելացնում է այդ բեռը: Մեծ երկրաշարժի յաջորդ օրուանից, սկսեց խոչընդոտել հումանիտար օգնութեան բեռնափոխադրումներին, 1993, 1994 թուականներին երկու անգամ սպառնաց յարձակուել Հայաստանի վրայ, 15 տարի շարունակ շրջափակել է Հայաստանը, մարզում եւ սպառազինում է ադրբեջանական բանակը ընդդէմ Հայաստանի: Այսօր այդ նոյն երկիրը Հայաստանից պահանջում է վերադարձնել Արցախը պատերազմում պարտուած Ադրբեջանին, դադարեցնել Յեղասպանութեան ճանաչման պահանջները, որոնց դիմաց կը բացի սահմանը: Այսքանը քիչ է, դեռ առաջարկում է իր միջնորդական ծառայութիւնը եւ ընդհանուր անվտանգութեան համակարգի ձեւաւորում: Մի կողմ դնենք այն, որ եւ շրջափակումը, եւ ներկայացուած պահանջները դուրս են միջպետական շարաբերութիւնները կարգաւորող բոլոր միջազգային նորմերից եւ բնորոշ են գուտ թուրքական մենթալիտետին: Մեր ինչի՞ն է պէտք թուրքական սահմանի բացումը երբ:

Հայաստանը չունի արտահանման ենթակառուցվածքային մարմին: Հայաստանի ներքին արտադրողը չի կայացել եւ կայունացել: Հայաստանի քաղաքացին, ներքին արտադրողը պաշտպանուած չի համապատասխան իրաւական, հարկային եւ մաքսային օրէնսդրութեամբ:

Հայ հասարակութեան ներկայ բարոյա-հոգեբանական վիճակը, դժուար թէ թոյլ տայ դիմադրել թուրքական ֆինանսա-տնտեսական էքսպանսիային:

Հայաստանը չունի ժողովրդին հաշուետու եւ նրան ծառայող իշխանութիւն:

Քանի դեռ այս խնդիրները լուծուած չեն, երկիրը տարիներ շարունակ քայքայող, ամաչացնող

համակարգային ճգնաժամը յաղթահարուած չի, իրատեսութիւնը պարտադրում է հայկական կողմին այդ սահմանը փակել աւելի ամուր, քան թուրքիան է փակել: Այսպիսին է Հայաստանի Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան տեսակէտը:

Ուզում եմ հակիրճ ներկայացնել Հայաստանի ՍԴՀԿ-ի գործունէութիւնը: Վերջին 2 տարում, Հայաստանի քաղաքական դաշտում, ՍԴՀԿ-ի հեղինակութիւնը շեշտակի բարձրացել է: Դա մեծապէս կապուած է նախագահական ընտրութիւններում կուսակցութեան որդեգրած յստակ ընդդիմադիր դիրքորոշման հետ: Կուսակցութիւնը, Հայ Ազգային Կոնգրեսում ունի իր արժանաւոյն տեղը եւ հեղինակաւոր կշիռը: Մենք մտադիր ենք համախմբել Կոնգրեսի կազմում ընդգրկուած սոցիալ-դեմոկրատական եւ սոցիալիստական ուժերին: Օր-օրի աւելանում է կուսակցութեան անդամների եւ համակիրների թիւը: Բացուել են երկու նոր մարզային գրասենեակներ Սիւնիքում եւ Արագածոտնում: Նախապատրաստում է բացել եւս երեք Հայաստանում (Շիրակի, Կոտայքի եւ Արարատի մարզկենտրոններում) եւ երկուսը Հայաստանից դուրս՝ Մոսկուայում եւ Ջաւախքում: Անց են կացուել «Կլոր սեղաներ»՝ Հայաստան-ՆԱՏՕ թեմայով, բազմաթիւ ասուլիսներ: Դեկտեմբեր ամսին կ'անցկացուեն կոնֆերանսներ «Հայաստան-թուրքիա» եւ «արհմիութիւնները եւ սոցիալական արդարութիւնը» թեմաներով: Հայ հասարակութեան կողմից նկատելի եւ գնահատելի է եղել «Սարգիս Տիրունի» երիտասարդական միութեան ակտիվ գործունէութիւնը ընդդիմադիր պայքարում: Հայաստանի վարիչ մարմինը որոշել է առաջիկայ համագումարին ներկայացնել եւ հաստատել «Հայաստանի սոցիալ-դեմոկրատական զարգացման ուղին» ծրագիրը, համոզուած լինելով, որ գործող լիբերալ համակարգը հիմնովին վարկաբեկուել, այլաբերուել եւ երկիրը կանգնեցրել է կործանման եզրին: Ներկայումս ծրագրի նախագիծը աւարտման փուլում է:

Ես ձեզ ներկայացրի մեր մտահոգութիւնները եւ նպատակները: Վստահ եմ, որ մենք միասին կարող ենք Հայաստանը դարձնել ազատութեան, արդարութեան, բարօրութեան, օրինականութեան, ամէն մի հային ձգող, այլ ոչ թէ վանող երկիր-Հայրենիք:

Advertisement for HMM Ladies Auxiliary New Years Eve Celebration. Features live entertainment by DJ Hratch on December 31, 2008, at 8:00 p.m. at HMM Garo Soghanalian Hall, 1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104. Admission: \$50.00 • Ages 6-12: \$25.00 • Ages 5 & Under Free. Includes an illustration of Santa Claus and stars.

121-ԱՄԵԱԿ

ՍԴՅԿ ՎԱՐԻՉ ՄԱՐՄՆԻ ԱՏԵՆԱՊԵՏ ՏՕՔԹ. ԶԱՄԲԻԿ ՍԱՐԱՖԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ

Անցեալ տարի, երբ կը նշուէր Հնչակեան կուսակցութեան 120 ամեայ յոբելինականը, որպէս բնաբան ընտրուած էր, « 120 տարի ազգի եւ հայրենիքի ծառայութեան մէջ » արտայայտութիւնը:

Կան բնաբաններ կամ լոգունդներ, որոնք գեղեցիկ եւ խօսուն ըլլալով հանդերձ, շատ յաճախ չեն համապատասխանէր իրականութեան եւ սին կը հնչեն: Սակայն այս պարագային, մենք ամենայն հպարտութեամբ եւ պատասխանատուութեամբ կը յայտարարենք, որ ա՛յո, հպարտ ենք մեր անցած 121 ամեայ ճանապարհով, Օսմանեան Թուրքիայէն, մինչեւ նորօրեայ Հայաստան, միշտ կանգնած ըլլալով հայ ժողովուրդի կողքին:

Առաւել հպարտ կ'զգանք այսօր, երբ հայրենի ժողովուրդի հետ միատեղ պայքարի ելած ենք յանուն Հայաստանը ժողովրդավարացման, օրէնքի գերակայութեան հաստատման եւ արժանապատիւ ապագայի:

Հայրենիքը այսօր կը գտնուի լուրջ մարտահրաւէրներու առաջ, Արցախեան հարցով, երկրի ներքին քաղաքական իրավիճակով եւ տարածաշրջանային խնդիրներու առումով: Հաւատացած ենք, որ այդ մարտահրաւէրներու յաղթահարման միակ գրաւականը ժողովուրդ-պետութիւն միասնականութիւնն ու փոխ վստահութիւնն է: Իսկ երբ չկայ ժողովրդավարութիւն, չկայ օրէնքի գերակայութիւն, երբ տակաւին անհիմն ու շինծու մեղադրանքներով բանտերու մէջ արգելափակուած կը մնան ընդդիմութեան բազմաթիւ ներկայացուցիչները, ապա չկայ յաջողութիւն:

Եթէ Հոկտեմբեր 27-ի ոճիրը սասանեց հայկական պետականութեան հիմքերը, ապա Մարտի 1-ի դէպքերը կործանեցին ժողովուրդի հաւատքը իշխանութեան հանդէպ: Եւ այնքան ատեն, որ ընթացող յետաքննութիւնը թափանցիկ եւ անկախ չէ, ապա երկրէն ներս չի կրնար գոյանալ այն բարենպաստ մթնոլորտը, որ պիտի բերէր փոխ վստահութեան առաջացման:

Տարածաշրջանային խնդիրներէն կ'ուզենք առանձնացնել հայ-թրքական յարաբերութիւնները, մանաւանդ նկատի ունենալով, որ այսօր տարբեր մակարդակներու վրայ արդէն շփոթման սկսած են Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ: Միշտ առաջնահերթ համարելով Հայաստանի պետական շահերը, կը հաւատանք, որ պահը հասած է, որ Հայաստան-Սփիւռք լայնածաւալ



քննարկում տեղի ունենայ, ցեղասպանութեան ընդունման պայքարի, հատուցմանն ու վերականգնման հարցերու շուրջ, որպէսզի մշակուի գիտականօրէն հիմնաւորուած մարտավարութիւն մը, ուր յստակօրէն բնորոշուած ըլլան իւրաքանչիւր հատուածի դերն ու մասնակցութեան չափը: Այդ առումով, կը ողջունենք Սփիւռքի նախարարութեան ստեղծուած եւ կը հաւատանք, որ ան կրնայ մեծ դեր խաղալ այս խնդրի համադրման մէջ: Ընդհանրական մարտավարութեան անհրաժեշտութիւնը խիստ կարեւոր է, յատկապէս երբ ապագային կրնան առաջանալ այնպիսի պարագաներ, երբ Հայաստանի պետական շահն ու Սփիւռքի իղձերը իրար չհամապատասխանեն եւ ընդհանուր յայտարարի մը բացակայութիւնը ստեղծէ անտեղի Հայաստան-Սփիւռք լարուածութիւն:

Գալով Հայաստանի ներքին կեանքին, Հնչակեան կուսակցութիւնը, հաւատարիմ մնալով իր սոցիալ դեմոկրատական գաղափարաբանութեան, այսօր իր վրայ վերցուցած է հասարակ ու անպաշտպան գործաւորի շահերը պաշտպանելու պարտաւորութիւնը, մանաւանդ երբ տակաւ կը խորանայ այն վիճը, որ գոյութիւն ունի հարուստ եւ աղքատ դասակարգի միջեւ:

Աղքատութեան եւ ընկերային անարդարութեանց վերացումը այն անհրաժեշտ քայլերն են, որոնք ժողովրդավարութեան հաստատման հետ միասին պիտի նպաստեն կերտելու այնպիսի հզոր եւ բարգաւաճ Հայաստան մը, որ կարողանայ անկախ Արցախի եւ կենսունակ Սփիւռքի երաշխաւորը դառնալ:

ԻՐԱԿԱԲԱՆ ԿԱՐՕ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ

Այսօր նշանակալից օր է մեր գաղափարական գինակիցների՝ Սոցիալ-Դեմոկրատ Հնչակցանների կյանքում: Այսօր բոլորս հավաքվել ենք այստեղ մեր ընկերների հետ միասին տոնելու, Հայ հասարակական-քաղաքական կյանքում իր մեծագույն ավանդ բերած, մեկ դարից ավել գործող կուսակցութեան տարեդարձը:

Մինչ մեր կազմակերպութեան եւ իմ կողմից շնորհավորանքի խոսքեր ասելը կցանկանայի անդրադառնալ կուսակցութեան գործունեութեան այն շրջանին, որը համընկնում է Հայաստանի երրորդ հանրապետութեան հիմնադրմանն ու կայացմանը:

Ձեռ կարող չնշել, որ Սոցիալ-Դեմոկրատ Հնչակցան կուսակցութիւնը միակն էր մեր ավանդական երեք կուսակցութիւններից, որն անկախ պետականութեան հիմնադրման առաջին օրերից ապացուցել է, որ իր համար առաջնայինն ու կարեւորը Հայ պետականութեան շահն է եւ որ այն բարձր է ամեն ինչից, չեմ կարող չնշել, որ հնչակցանների համար բարձրագույն արժեքներն են համամարդկային արժեքներն ու օրինականութիւնը: Հնչակցան կուսակցութեան գործունեութիւնն ու քաղաքական ուղեգիծը ընդունում է Հայ պետականութեան եւ օրինականութեան գերակայութիւնը, եւ սա իրականութիւն է:

Ես հիշում եմ, երբ Հայաստանում էի շատերի կողմից շահարկվում էր այն միտքը, որ Հնչակցան կուսակցութիւնը հարմարվում է ցանկացած իշխանութեան հետ: Կյանքը ցույց տվեց, որ նմանատիպ հայտարարութիւնները անհիմն են եւ նպատակ ունեն թաքցնելու այլ քաղաքական շրջանակների իրական դեմքը:

Երկու հազար երեք թվականի եւ դրանից հետո տեղի ունեցած կարեւորագույն քաղաքական իրադարձութիւնները ցույց տվեցին, որ Հնչակցան կուսակցութիւնը իր քաղաքական որոշումներում առաջնորդվում է միմիայն պետական շահերով: Թե նախավերջին եւ թե վերջին նախագահական ընտրութիւններին կուսակցութեան դիրքորոշումների հիմքում դրվել են Հայաստանում ժողովրդավարական արժեքների ամրագրման, ՀՀ քաղաքացիների իրավունքների եւ ազատութիւնների ապահովման եւ երաշխավորման կաշուն համակարգեր ստեղծելու գաղափարները: Իմ խորին համոզմամբ բոլոր Հայ քաղաքական կազմավորումները, դրանցում ներգրավվածներս պետք է ընդունենք, որ քաղաքական տարածաշրջաններով հանդերձ բոլորս



ունենք ընդհանուր շահեր եւ որ այդ ընդհանրական շահերը ոչ թե քաղաքական պայմանավորվածութիւնները կամ անպարզորոշ եւ ժողովրդահասճո հայտարարութիւններն են այլ ժողովրդավարական սկզբունքների հիման վրա կազմավորված ժողովրդական իշխանութիւններն ու օրէնքներ են, օրինականութեան շրջանակներում գործող բազմակուսակցական քաղաքական համակարգը:

Անգնահատելի է կուսակցութեան ներդրումը թե սփյուռքում եւ թե Հայաստանում վերջին նախագահական ընտրութիւններում: Կուսակցութեան արեւմտյան շրջանի կազմակերպութեան հետ միասին բոլորիս հաջողվեց ԱՄՆ-ում ստեղծել Հայաստանում օրինականութեան հաստատման գործընթացներին աջակցող կառույց, նախընտրական եւ ընտրական շրջանում հնարավորինս ապահովել ԱՄՆ կառավարութեան կողմից համարժեք վերաբերմունք Հայաստանում ընթացող քաղաքական զարգացումներին: Ես կարող եմ ասել, որ թե կուսակցութիւնը եւ թե մեր ընդհանուր միավորումը պաշտպանելով ընդդիմութեանը չի հետապնդել անձնային կամ խմբային շահեր այլ ձգտել է նպաստել Հայաստանում ժողովրդավարութեան վերահաստատմանն ու օրինականութեան հաստատման:

Այսօր դուք վաստակել եք հպարտանալու Ձեր իրավունքը:

Ընկերներիս եւ իմ անունից / Հայ Ազգային Կոնգրեսի «Դեմոկրատական Հայաստան» քաղաքացիական նախաձեռնութեան անունից / շնորհավորում ենք Սոցիալ-Դեմոկրատ Հնչակցան կուսակցութեան հարյուր քսանմեկ ամյակը, բարի երթձեզ մեր գաղափարական պայքարի սիրելի գինակիցներ:

ԶԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՐԵԿՈՅ

Ուրբաթ, 21 Նոյեմբեր 2008, Փաստինայի Հ.Մ.Մ.ի «Կարօ Սողանալեան» սրահէն ներս, որ գեղեցկօրէն գարդարուած էր, տօնական ջերմ մթնոլորտի մէջ, երեկոյեան ժամը 8:30էն սկսեալ, աւելի քան 300 հարիւր հրաւիրեալներու ներկայութեան, խրախճանային բացառիկ երեկոյ մը տեղի ունեցաւ, որ երկար ատեն պիտի մնայ ներկաներու, կուսակցական եւ համակիր, յիշողութեան մէջ: Կազմակերպիչ յանձնախումբին հրաւերին ընդառաջած էին մեծ թիւով Ս.Դ.Հ.Կ.ի առաքելութեան հաւատարիմ եւ համոզեալ ընկերներ եւ

համակիրներ, որոնք, այդ երեկոյին ներկայ գտնուելու համար Փաստինա ժամանած էին հեռաւոր վայրերէն, ինչպիսիք են Լուիզիանա նահանգէն, մեր նուիրեալ ընկերներէն՝ Ընկ. Վազգէն Գալթաքճեան եւ իր ազնուափայլ տիկինը, Արժանթինէն ընկ. Գէորգ Մարգարեան եւ Լոս Անճելըսի շրջանէն բազմաթիւ կուսակցական ընկերներ եւ համակիր ընտանիքներ:

Ներկաներու մէջ յատկապէս նշմարելի էին Ս.Դ.Հ.Կ.ի Կեդրոնա-



ԱԶԳԱՅԻՆ

ԼՈՁՈՒՆԳԱՅԻՆ ՅԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄՐՄՈՒՆՋԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ՅԱՐՈՒԹՅՆ ԴԱԻԻԹԵԱՆ

Սփիւռքի նախարար դոկտ. Հրանուշ Յակոբեանի Լոս Անճելըսեան մէկ ելուցիւն առթած տպաւորութեան արդիւնք է այս յօդուածը: Հայաստանի իշխանութեանց այլ դեկալարներու օրինակով, ինք ալ շատ գեղեցիկ պատկեր մը ներկայացուց բոլորիս, թէ ինչպիսի ծրագիրներով ճամբայ կ'ելլէ այս սփիւռքի նախարարութիւնը: Որքան ընդլայնուեցաւ ներկայացուած ծրագիրներու ծիրը, այնքան նուազեցան մեր ակնկալութիւնները եւ հիմնաւորուեցաւ մեր վախը, որ յաջորդական բեմադրութեան մը ակնատես պիտի դառնանք: Մեր մտապատկերին առջեւ սկսան տողանցել Հայաստան-Սփիւռք 3 խորհրդաժողովները, Աղետի Գօտին վերացնելու, ժողովրդավարութիւն հաստատելու եւ այլ մեծամեծ խոստումներն ու յայտարարութիւնները որոնք մնացին այդպիսին: Երանի թէ ծրագիրներու թիւը ըլլար սահմանափակ ու չի տարածուէր այնքան, որ ընդգրկէր մինչեւ անգամ Սփիւռքի խառն ամուսնութեանց լուծում գտնելու ճարը:

Հարց-պատասխանի բաժնով, յաւուր պատշաճի խօսքերէն անդին, կը սպասէինք լսել մտահոգիչ երեւոյթներու մասին հարցումներ: Դժբախտաբար չեղան: Արծարծուեցաւ միայն միասնական ուղղադրութեան հարցը եւ նախարարի պատասխանը եղաւ այն, որ կարուկ փոփոխութիւնը կրնայ անգրագիտութեան իրավիճակ յառաջացնել: Մենք համաձայն չեղանք նախարարի տեսակէտին, յիշեցնելով որ ո'չ Աբեղեանական ուղղադրութեան պարտադրում եւ ո'չ ալ Աթաթիւրքի աւելի ծայրայեղ քայլը (արաբերէն տառերու փոխարինումը լատինականով), այդպիսի իրավիճակի չի յանգեցան: Եթէ «Մէկ ազգ մէկ մշակոյթ» արտայայտութիւնը լոգոնգայինէն պիտի անցնի գործնականի, ապա անոր մղիչ ուժը կրնայ դառնալ միասնական ուղղադրութեան որդեգրումը:

Երբ մեր մտահոգութիւնը յայտնեցինք, որ ի տես Հայաստանի ներս կատարուող իրադարձութեանց՝ անօրինական ընտրութիւններ, Հոկտեմբեր 27ի եւ Մարտ 1ի սպանդները, քաղաքատարիկներ, Հայաստան-Սփիւռք ձեւական գիտաժողովներ, եւ այլ show-եր, անվստահութեան մթնոլորտ մը յառա-

ջացած է որ կը խախտէ մեր հաւատքը եւ կը դժուարացնէ այս ամբողջ հայապահպանման մեր գործը, նախարարի պատասխանը հիմնականին մէջ եղաւ հետեւեալը.

«Հայաստանը ընդամէնը 17 տարեկան է: Եթէ ձեզ թուում է որ ձեր 17 տարեկան գաւազը կրնայ լուծել է բոլոր հարցերը, գիտակից է, խելացի է, սխալում է ք... Դուք փորձում էք վերցնել Ամերիկայի այստեղի քաղաքակրթութիւնը եւ այն տեղայնացնել Հայաստանի վրայ... Հայաստանը ունի դժուարութիւններ, ոչ ոք չի ասում որ հայրենիքը ժողովրդավարութեան գաղաթնակէտին հասել է, բայց չտեսնել այն գարգացումը, այս յառաջադիմութիւնը, ես դա չեմ ընդունում»:

Այստեղ կ'արժէ յատկացնել որ 17 տարեկանի վարկածը յաճախակիօրէն առաջ կը քաշուի իշխանական շրջանակի կողմէ, ապակողմնորոշելու համար ժողովուրդը: Առաջին հայեացքով եւ զգացականօրէն ընդունելի թուացող այդ համեմատութեանը երբ աւելի խորը նայինք, կը տեսնենք անոր սխալ ու փուճ հիմքը: 17 տարեկան պատանին 17 տարեկան պետութեան հետ համեմատելը անհիմն է: Նախ եւ առաջ 17 տարեկան պատանին միայնակ անհատ մըն է, որ նոր թեւակոխած է գիտակցական տարիք: Իսկ 17 տարեկան պետութիւնը ամբողջ ազգի մը 17 տարուան արգասիքն է, իր առաջնորդներով ու ժողովուրդով: Երկրորդ, 17 տարեկան պատանիի գիտակցութեան մակարդակը կախեալ է իր ծնողական տունէն, դպրոցէն ու շրջանակէն ստացած դաստիարակութեան: Պետութեան ու Ազգի մը պարագային, անոր քաղաքացիական գիտակցութեան մակարդակը կապուած է ամբողջ պատմական անցեալի, ժառանգած փորձի ու արժէքներու ընկալումին վրայ: Մեր ազգի պարագային, առնուազն 4500 տարուան հարուստ փորձ մը ունինք, որուն գիտակցութիւնը պարտին ունենալ մեր առաջնորդները, բայց նոյնը սպասել 17 տարեկան պատանիէն, պարզապէս անհեթեթութիւն է: Աւելի քան 1500 տարիներ առաջ մենք ունեցանք խորենացին, որ ազգակերտման յատակ ուղի մը գծեց մեզի համար: Մեր առաջնորդները պարտին գիտակից ըլլալ այդ ուղիին եւ ժողովուրդը ըստ այնմ առաջնորդեն:

Բայց դժբախտաբար ունինք Ազգային ժողովի պատմագաւորներ, որոնք կ'արհամարհեն ու անարժէք կը նկատեն 50 տարուան հնութիւն ունեցող գրքեր, ալ ուր մնաց 1500 տարուանը:

Գիտակից այս բոլորին, մենք հարց տուինք նախարարին, թէ ի՞նչ գազացման ու յառադիմութեան մասին է խօսքը, երբ 17 տարիներ առաջուան Ազգային ժողովը շատ աւելի բարձր մակարդակ ունէր քան՝ այսօրուանը՝ որ թաղային հեղինակութիւններ բազմած են: Նախարարը պատասխանեց, թէ «ընտրութիւնը կատարում է ժողովուրդը: Եթէ ժողովուրդը ընտրում է, ասել է ժողովուրդը ինք է որոշում: (Այսինքն՝ մեր ժողովուրդի գիտակցութեան մակարդակը 17 տարուան մէջ ինկած է թաղայինի մակարդակին: Յ.Տ.Դ.): Ես ձեզ հետ համաձայն չեմ: Այսօր թաղային հեղինակութիւններն են ստեղծում աշխատատեղեր, անոնք իրենց մէջքն են շտկել եւ Նոյեմբեր 1ի \$30 միլիոն նուիրեցին Հայաստան Համահայկական Հիմնադրամին: Եւ այս ամէնը իրենց աշխատանքի եւ քրտինքի շնորհիւ: Այնպէս որ թուարկել բաներ, որոնց մէջ կայ ճշմարտութիւն, թուարկել եւ ասել որ հայրենիքը մեզ այլեւս պէտք չի, այդ ինչ էք անում, դա ճիշտ չի...»:


Նախարարի պատասխանի մէջ հնչած մտքերը համոզեցին մեզ, որ անգամի մը համար եւս պիտի դառնանք յուսախաբ, որովհետեւ մատը վէրքին վրայ դնելու փոխարէն, մեզի պիտի հրամցուին լոգոնգային հայրենասիրական յայտարարութիւններ: Իր պարզած ծրագիրներու ճոխութիւնը եւ ունեցած միջոցներու սահմանափակութիւնը այդ կը թելադրեն մեզի: Աւելին, բոլորիս ծանօթ արդար քննադատութեանց դիմաց իր որդեգրած պաշտպանական դիրքորոշումն ու արդարացումները մեզ չեն յուսադրեր, որ ինք պատրաստ է կառուցողական երկխօսութիւն ծաւալել: Դեռ աւելին, մեզի վե-

րագրուած «թէ գնաք սարգէք, երբ լաւ կը լինէք, նոր կը գամ» կամ «հայրենիքը մեզ այլեւս պէտք չի» ամբաստանութիւնները սխալ եւ վիրաւորական կը գտնենք, որոնք կը բացայայտեն իր միասնականութեան քարոզներու ձեւականութիւնն ու լոգոնգային յատկութիւնը: Երբ ելուցի աւարտին իրեն մօտենալով հարց տուինք թէ «դուք մեր հայրենասիրութեան վրա՞յ կը կասկածիք», իր պատասխանը տարբերեցաւ հրապարակային դիրքորոշումէն ու մեզի խրատ տուաւ որ մեր մտահոգութիւնները այդպէս հրապարակաւ չ'արտայայտենք, այլ՝ ուղղակի իրեն հետ կապուինք, որովհետեւ Հայաստանը շրջապատուած ըլլալով թշնամիներով, անոնք կրնան շահագործել այդ: Իր այդ անհաւատալի «խրատը» մեզի չի շեղուց մեր նախակրթարանի տարիներու ուսուցչուհիներու խրատները: Եւ տեղն ու տեղը ծնաւ այս յօդուածի միտքը եւ խորագիրը «մըմունջային ժողովրդավարութիւն» բնութագրումը:

Մեր հաստատ համոզումով, ժողովրդավար Հայաստանի կերտումը համայն հայութեան նպատակակէտը պէտք է ըլլայ, որովհետեւ թէ հայրենաբնակ հային եւ թէ սփիւռքահային ապագայի երաշխաւորման գլխաւոր պալանն ու հիմքն է այդ: Այդ երաշխիքը մըմունջով չի բազմաբար, այլ մեր բացթողումներն ու սխալները հրապարակաւ ու ճակատաբաց դիմագրաւելով ու սրբագրելով: Լսել ու չընդգրկել անիրաւութեան դէմ, կը նշանակէ հող պատրաստել աւելի ծանրակշիռ շարիքներու: Անցնող 10 տարիները այդ ապացուցեցին մեզի: Հետեւաբար, ի սէր Հայաստանի ու հայութեան, սփիւռք այցելելով Հայրենիքի ամէն մէկ ներկայացուցիչի հետ հանդիպումը պէտք է վերածուի աւուր պատշաճի հաճոյախօսութեան, այլ տեղի տայ մեր ցաւոտ հարցերու արծարծման ու անկեղծ քննարկման: Որովհետեւ բոլորիս ապագան նժարի վրայ է: Որովհետեւ նախընտրելի է հիմա գիրար անհանգստացնելու գնով սրբագրել սխալները, քան թէ վաղը դարձեալ ողբալ հերթական կորուստին վրայ:

ՃՇՂՈՒՄ

«Մասիս»ի Նոյեմբեր 22ի համարով, «Լոս Անճելոսի Հայ Գոյրերու Վարժարանի Մշակոյթի ամսուան միջոցառումներ» թղթակցութեան մէջ վրիպած են հետեւեալ սխալները.
 1) Գիրքերը տրամդրուած են Պերճ Գրատան կողմէ, փոխան Ապրիլ գրատան:
 2) Պրն. Պեր պէտք է կարդալ Պրն. Պերճ:



A.B.A. INSURANCE SERVICES

Life, Health, Group Health, Disability, Long Term Care

Blue Cross of California 1975-2008 Blue Shield of California

33th ANNIVERSARY

ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆԵՐԱԺԵՇՏ Է

ԵՐՔԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՊԵՏՐՈՍ ՄԱՐՈՆԵԱՆ

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205
E-mail: BMaronian@AOL.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"



ՇԵՐՈՍԱՄԱՐՏ

ՀԱՃՆՈՅ ԶԵՐՈՍԱՄԱՐՏԻ 88-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՆՇՈՒԵՑԱԻ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ

Հաճընցիները, իւրաքանչիւր տարուան Հոկտեմբերին, ուր որ ալ գտնուին աշխարհի բոլոր ծագե-

րունակ կ'անդրադառնան Հաճնոյ Հերոսամարտի մասին:

Անդրադարձաւ «Հայ Ազատագրական Պայքարի պատմութեան, որ լեցուն է սիրանքներով եւ անոնց մէջ իրենց ամենածանրակշիռ ու յարգանքի արժանի աւանդն ունին Հաճընի ինքնապաշտպանութեան անխտիր բոլոր մասնակիցները»: «Արդեօք պատերազմը կամ Հերոսամարտը աւարտեցաւ 1920 թուականին: Ո՛չ: Հերոսամարտը շարունակեցին հաճընցիներու հետագայ սերունդները, այս անգամ աշխարհի տարբեր երկիրներու մէջ... ուր ոչ միայն հիմնեցին օճախներ, այլև իրենց զաւակներուն պարգեւեցին հայեցի դաստիարակութիւն, ազգային բարձր գիտակցութիւն»:

«1958 թուականին հիմնադրուեցաւ Նոր Հաճըն քաղաքը: Թէ սփիւռքի եւ թէ Հայաստանի մէջ ապրող հաճընցիներու գործունէութիւնը յիշուի պէտք է համարել 1920 թուականի Հերոսամարտի տրամաբանական շարունակու-

Կիրակի, Նոյեմբեր 2-ին, Փաստինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ հոգեհանգստեան մասնաւոր պաշտօն Հաճնոյ Հերոսամարտի եւ համայն Հայութեան եւ Ացախի նահատակներու հոգիներուն լուսաւորութեան համար: Ապա, Հ.Բ.Լ.Մ.-ի Փաստինայի Կեդրոնի Պօյաճեան Սրահին մէջ, Փաստինայի հոգեւոր հովիւ Հոգ. Տ. Պարետ Մ. Վրդ. Երէցեան կատարեց օրհնութիւնը աւանդական ճիտապօր-հոգեճաշին, որու բաշխումէն առաջ տեղի ունեցաւ ոգեկոչումի կողմից յայտարար մը:

Իր բացման խօսքին մէջ, օրուան հանդիսավար Յակոբ Կակոսեան հանգամանօրէն անդրադար-



Ճիտապօրի պատրաստութեան պահուց

ձաւ հայութեան մէջ տակաւ արմատացող անտարբերութեան եւ նորահաս սերունդի ազգային դաստիարակութեան բացակայութեան: Իսկ աւելի եւս արժեւորելու համար Հաճնոյ Հերոսամարտի ոգեկոչումներն ու յիշատակումները, ըսաւ, պէտք է «գիտնանք վերածել զանոնք ամենօրեայ ապրելակերպի»: Թող այս ըլլայ պատգամը այսօրուան:

Ապա, յտընկալս երգուեցաւ Հաճնոյ Քայլերը «Օղանաւ Եկաւ»: Բեմ հրաւիրուեցաւ հանդիսութեան գլխաւոր բանախօս, հաճընցի մտաւորական սերունդի ներկայացուցիչ Տօքթ. Զաւէն Քրքեաշարեան: Յարգելի բանախօսը առաջին առիթով արտայայտուեցաւ հաճընցիներու հաճընցի ըլլալու հպարտութեան մասին: Թէ ինչպէս, մանուկներէն մինչեւ տարեցները անընդհատ կը կրկնեն «Ես հաճընցի եմ» բառերը, ընդգծելով թէ իրենց «ես»ը, թէ հաճընցի ըլլալու անսահման հպարտութիւնը, եւ շա-

թիւնը: Անցած 88 տարիները եղած են մաքառումի, պայքարի, ստեղծագործ աշխատանքի տարիներ: Եղած են նաեւ սխալներ եւ վրիպումներ: Բայց այսօր ինչ է մեր խնդիրը:

Խնդիրները շատ են: Լուծելի եւ անլուծելի: «Բայց մեզմէ իւրաքանչիւրը գոնէ բարոյապէս պարտաւոր է ազգային պատասխանատուութիւն ունենալ, մտահոգուիլ ազգի, մեր զաւակներու, հայրենիքի, հայ գաղթօճախներու ճակատագրով: Արտագաղթ հայրենիքէն, Արցախի, Զաւախքի, ցեղասպանութեան խնդիրներ, հայաթափուող երբեմնի հօր գաղթօճախներ Լիբանան, Սուրիա, Պարսկաստան...»:

Ուրեմն, «ինչ է մեր այսօրուայ ընելիքը: Պարտուելու իրաւունք չունինք: Ըլլանք իրարու նկատմամբ հանդուրժող, ներողամիտ եւ օժանդակող: Ընել ամէն ինչ հայազգի զաւակները դարձնելու նուիրեալներ: Եթէ մեր



Հոգ. Տ. Պարետ Մ. Վրդ. Երէցեան կը կատարէ օրհնութիւնը աւանդական ճիտապօր-հոգեճաշին

զաւակները դառնան փնտուած փաստաբաններ, գիտութեան գործիչներ, լաւագոյն արուեստագէտներ, ազգային նոյնիսկ անլուծելի թուացող խնդիրներ կարող են լուծում ստանալ»:

Հետեւաբար, «Աշխարհին պէտք է ներկայանալ որպէս գրագէտ, հօր եւ պատրաստուած սերունդ: Ուստի, մեր հիմնական ուժերը պէտք է ուղղուին մեր զաւակներուն ազգային, գիտական, մասնագիտական, բարոյական կերպարի դաստիարակմանն ու կերտմանը: Հօր սերունդ ունեցող ժողովուրդը կ'ունենայ հօր հայրենիք»:

* * *

Իր կարգին ելոյթ ունենալով, Հաճնոյ Հայրենակցական Միութեան Գալիֆորնիայի վարչութեան ատենապետ Եփրեմ Պաղպուտարեան եւ ամփոփ գիծերու մէջ ներկայացուց Հայաստանի Նոր Հաճըն քաղաքի հիմնադրութեան Յիսնամեակի միջոցաւումներն ու Հաճնոյ Հերոսամարտի նահատակներուն համար կատարուած ճիտապօր-մատաղի օրհնութիւնն ու բաշխումը Նոր Հաճընի բոլոր բնակիչներուն: Թէ ինչպէս հանդիսութիւնները սկսած են Հոկտեմբեր 10-ի առաւօտեան ժամը 10-ին եւ տեւած մինչեւ կէս գիշեր, մէկը միւսին յաջորդող պարախումբերու, երգչախումբերու եւ նուագախումբերու զեղարուեստական ներկայացումներով: Սոյն հանդիսութեանց մասնակցած են պետական ղէմքեր, Գալիֆորնիայի, Լուիզիանայի, Փրանսայի եւ

Արժանթինի Հաճնոյ Հայրենակցական Միութեանց ներկայացուցիչները, ինչպէս նաեւ աւելի քան Տասը Հազար հանդիսականներ: Երեկոյեան տեղի ունեցած է հարատային Երաժշտութեան երգիչերգչուհիներու համերգին յաջորդած է Տօնական Հրավառութիւն: Այս ուրախ առիթով, Գալիֆորնիայի Հաճնոյ Հայրենակցական Միութեան վարչութիւնը նուիրած է Մեծն Մուրատի Անուան Միջնակարգ դպրոցին չորս նոր համակարգիչներ, երեսուն նոր գրասեղաններ, ինչպէս նաեւ «երկրագունդ» քարտէզ եւ այլնայլ դպրոցական պիտոյքներ:

* * *

Ճիտապօր-հոգեճաշի բաշխումի ընթացքին զեղարուեստական յայտագրով ելոյթ ունեցաւ երգչուհի Վարուհի Շահինեան: Կատարուեցան սրտաբուխ նուիրատուութիւններ: Շնորհակալութիւն յայտնուեցաւ մեծ ու փոքր բոլոր նուիրատուներուն, ճիտապօրը պատրաստողներուն եւ ներկաներուն:

Հաճնոյ Հերոսամարտի Նահատակներուն նուիրուած սոյն հանդիսութեան, գօտեպնդող սրտաբուխ ջերմ խօսքերով ելոյթ ունեցաւ նաեւ Հոգ. Տէր Պարետ Մ. Վրդ. Երէցեան:

Ներկաները բաժնուեցան սրահէն վերանորոգուած մեր Անմահ Նահատակներու անխախտ հաւատքով եւ անտեղիտալի հայրենասիրութեամբ:

Յ. Ա. Կ.

ԱՐԺԱՆԹԻՆԱՅԱՅ ԵՐԵՍՓՈՒՍԱՆ ՍԵՐԻՍԻՕ ՆԱՅԱՊԵՏԵԱՆ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՄԷՋ

Շուրջ շաբաթէ մը ի վեր Լոս Անճելլոս կը գտնուի արժանթինահայ երեսփոխան Սերիսիո Նահապետեան ընկերակցութեամբ իր տիկնոջ: Ան բազմաթիւ հանդիպումներ ունեցաւ հայ գաղութի եւ ամերիկեան շրջանակի անձնաւորութիւններուն հետ: Ան այցելեց Մոնթեպելոյի Նահատակաց Յուշարձանը եւ ելոյթ ունեցաւ նաեւ Հիմնադրամի թելեթոնէն:

STUՒՔ՝ ԵՐԹ BANKRUPTCY-Ի ՕՐԵՆՔՆԵՐԸ ԿՕԳՆԵՆ ՁԵՁԻ, ԶԱՆԳԱՅԱՐԷՔ

JANSEZIAN LAW FIRM, PC If you're facing overwhelming debts, bankruptcy laws may eliminate all your debts permanently! 225 South Lake Avenue, Third Floor, Pasadena, California 91101 Call Now for a FREE Consultation: 626-432-7209

Nazareth V. Jansezian, Esq.

Massis Weekly

Volume 28, No. 43

Saturday, NOVEMBER 29, 2008

121st Anniversary of Social Democrat Hunchakian Party Commemorated

GLENDALE, CA – On November 22, the Social Democrat Hunchakian Party commemorated the 121st anniversary of the party's founding. The event which took place at Glendale Community Church and was attended by His Eminence Archbishop Hovnan Derderian, Father Andon Saroyan of St. Gregory Armenian Catholic Church, SDHP Central Committee Chairman Mr. Setrag Ajemian, Party officials, representatives of various Armenian organizations, community representatives, as well as a crowded audience.

The SDHP Western USA region Chairman, Dr. Hampik Safarian embodied the significance of the occasion, by noting that 121 years ago the SDHP became first political organization for the Armenian people, which from its inception to the present stages continues to advocate for the Armenian causes worldwide and struggles for a independent, democratic Armenia.

Mr. Garo Garabedian, Esq. representing the Armenian National Congress, expressed Congress' appreciation for the SDHP's historical advocacy and endurance for the rights of Armenians, noting that the SDHP con-



tinues its great effort even in today's Armenia, stressing the need for human rights, political and democratic reforms.

SDHP Western region Executive Committee member Mr. Souren Khoudenyanyan conveyed the current issues concerning the SDHP within the Armenian Diaspora, the Republic of Armenia, and Artsakh. Mr. Khoudenyanyan articulated the SDHP's continued resolve to gain a just verdict in matters concerning Armenian Cause, democracy in Armenia, and a peaceful

resolution to the Nagorno Karabakh conflict with principles of democracy and self determination.

The evening's keynote speaker was former Deputy Prime Minister and Deputy Defense Minister of the Republic of Armenia, Mr. Vahan Shirkhanyan, current member of the SDHP's Central Committee in Arme-

Continued on page 4

Armenia Wins 2nd Consecutive Chess Olympiad Gold

DRESDEN, Germany – Armenia won its second straight gold medal at the Chess Olympiad Tuesday by defeating China 2.5-1.5 in the 11th and final round.

Armenia's only win came on board four where Tigran L. Petrosian beat Li Chao. Armenia finished the tournament alone in first place with 19 points. Two points are awarded for each match win and one for a tie.

Israel took silver with 18 points after beating the Netherlands 2.5-1.5.

The United States took bronze on a tiebreaker after upsetting second-seed Ukraine with a 3.5-0.5 drubbing, getting wins from Gata Kamsky against Vassily Ivanchuk on board one, Alexander Onischuk against Pavel Eljanov on board three, and Yuri Shulman against Zahar Efimenko on board four. Hikaru Nakamura of the United States drew Sergey Karjakin on board two.

The rout left the teams tied at 17

Continued on page 3

Thomas Hammarberg: Armenia Has Failed to Comply With the Demands of the Council of Europe

YEREVAN -- Armenia has thus far mostly failed to comply with the repeated demands of the Council of Europe in its current handling of the post-election crisis, said Thomas Hammarberg, the Council of Europe's commissioner for human rights, who ended his three-day fact-finding visit to Armenia at the weekend.

The Strasbourg official specifically said that his criticism concerned the lack of progress in exposing those responsible for the post-election violence on March 1 as well as the continuing criminal investigations and trials of opposition activists in connection with those events.

At a press conference in Yerevan on Saturday, Hammarberg said in a report he is going to submit to the Council of Europe soon he will mention as the only positive development the fact that a fact-finding group has been set up in Armenia to conduct an additional probe into the March 1 unrest at an expert level. At the same time, the commissioner said he will have to critically assess the general lack of progress in his report.

"We are bound to be critical when it comes to developments or lack of developments," Hammarberg emphasized to reporters.

In particular, Hammarberg criticized Armenian prosecutors and judicial authorities for the continuing case against several oppositionists, which he said lacked a strong ground to be initiated in the first place.



CE commissioner for human rights Thomas Hammarberg

"I am critical about some of the trials that have already been concluded and about the preparation of the major case against the seven prisoners," Hammarberg said in reference to the case of seven leading opposition members, including Alexander Arzumanyan, Armenia's ex-foreign minister and leading supporter of opposition leader Levon Ter-Petrosian in last February's presidential election, as well as three members of parliament who have been jailed since March for their alleged roles in the post-election developments. All are charged under Article 300 of Armenia's Criminal Code ("usurpation of state power") and part 2 of Article 225 ("instigating and organizing mass disturbances").

The Strasbourg official said he would express his final opinion on the case of the oppositionists after the

Continued on page 2

Artsakh President Bako Sahakian Meets With Social Democrat Hunchakian Party Representatives



LOS ANGELES - On November 25, Artsakh President Bako Sahakian met with members of Social Democrat Hunchakian Party Western United States Executive Committee. During the meeting, issues regarding Artsakh - Diaspora relations, as well the country's current financial, administrative, and socio-economic developments were discussed. Furthermore, Diasporan initiatives to strengthen Artsakh's advancement towards a stronger economy as well as maintain military viability against any Azeri intimidation were deemed of utmost importance.

The SDHP delegation led by Chairman Dr. Hampik Sarafian expressed the Diaspora's concerns on recent developments of negotiations that have transpired between the Republic of Armenia and Azeri regimes. He emphasized the political party's solidarity and support for the liberty of Artsakh's Armenian population for a democratic right to self determination, and the need for Artsakh to partake in any further international negotiations. The SDHP delegation also emphasized the need for a strategic plan that will be geared toward strengthening the borders of Artsakh through repopulation of the border villages and towns in preparation for a possible future referendum which will determine the final status of Nagorno Karabagh.

The NKR President emphasized the indispensable need to further strengthen contacts between the Diaspora and Artsakh, to form an atmosphere of constructive cooperation between various political forces. Both sides established that Artsakh's independence and its future is one of the most important issues that faces and unites the Armenian Diaspora.

Gourgen Yeghazarian: Only A Legitimate Government in Armenia Can Guarantee Artsakh Independence

YEREVAN -- On November 24th, addressing the "Mirror" press club, former Deputy Minister of the National Security, Mr. Gourgen Yeghazarian, member of the Social Democrat Hunchakian Party's Central Committee in Armenia conveyed the Party's belief that nothing was gained by the recent discussion of the Artsakh situation initiated by Serzh Sarkisian with Armenian political parties. He stated that the discussion did not convey any key frameworks being reported in the press and acted as a mere show for the international community by the present regime to demonstrate that normalcy is currently prevalent in Armenia.

In relation to the key frameworks addressed in the press, Mr. Yeghazarian, specifically asked what exactly Serzh Sarkisian meant when he stated that there will be a referendum for the issue at hand. "The populace of Artsakh has had for over a decade already informed the international community of its intention, a de-facto referendum," he said. Mr. Yeghazarian also questioned how a referendum would work in a peaceful manner, how is it possible to obtain peace when Azerbaijan could flood Artsakh with 300 thousand Azeris to counter the free will of the Artsakhis. Mr. Yeghazarian also addressed to the press club exactly which borders Serzh Sarkisian entails will be determined

through the international negotiations with Azerbaijan, when Armenia and Azerbaijan already have defined borders, as does Artsakh. Lastly, he questioned the validity of the guarantees Mr. Sarkisian expressed as to the people in Artsakh, when they already have a democratically elected government, with an executive and a legislative branch.

Mr. Yeghazarian stressed that in order to fully understand the scope of the latest developments of the Artsakh issue, as well as the recent invitation of political parties to "address" these developments by the current Armenian regime, one has to look back to the February 19 Presidential elections in Armenia, and the opposition to the falsification of the elections by the Armenian people. He stated that with the falsified election, Mr. Sarkisian does not have any legitimacy within the country nor with the international community. He noted that in order for there to be a peaceful internationally backed resolution for the Artsakh issue with democratic principles of self determination as guidelines, Armenia must establish itself as a truly democratic country.

As for the reported Madrid peace accords, Mr. Yeghazarian stresses that any accord which as a starting point nullifies the democratically elected government as well as Artsakh's armed forces should be a nonstarter.

Watchdog Expert Calls for 'Meaningful Reform' in Armenia

NEW YORK -- Armenia needs a more dedicated reform action to deal with the consequences of its worst political crisis, according to a representative of a leading US human rights organization.

In an exclusive interview with RFE/RL, Christopher Walker, who is director of studies at New York-based Freedom House, said the Armenian government's steps in the aftermath of the political upheaval in March so far "have been only partial."

Walker, whose department has closely followed and published annual reports on the state of human rights protection and democracy in different countries of the world, finds it a greater concern that in recent years Armenia's authorities "have not advanced meaningful reforms" to ensure a change in the fundamentals.

"We haven't seen the sort of meaningful, durable and dedicated reform efforts that one should look for in Armenia," the expert said.

Speaking about specific areas, Walker said: "Clearly there are a considerable number of areas where reforms are needed. Some of the areas that the Council of Europe has emphasized in the aftermath of the March events included freedom of assembly. There have been partial steps there. There have also been some steps in forming a body to review the events of March, which I think have been looked at with cautious optimism..."

According to Walker, the economic sphere is a separate area of concern in Armenia.



"Despite Armenia's economic growth over the last few years, much of the strategic parts of the economy are held by a fairly small number of senior political officials, and this is something of an enormous concern, because political freedom will be propelled by economic freedom, they go hand in hand. In Armenia there is a very mixed record on this," the Freedom House expert said.

Another area that requires reform, according to the expert, is freedom of speech.

Դեռ Ղազուինում, եկեղեցի կառուցելուց շատ առաջ, իմ առաջարկով եւ դպրոցի երաժշտութեան դասատու Զօրա Բժշկեանի ղեկավարութեամբ կազմուեց եկեղեցական երգչախումբ, որ տարիներ յետոյ, աւելի ընդարձակուով, դարձաւ մի ներկայանալի երգչախումբ, որ ամէն կիրակի մասնակցում էր, կատարելով Մ. Եկմայեանի քառաձայն Պատարագը: Այնուհետ ես էլ իմ հերթին երգողներին սովորեցրի մի քանի շարականներ եւ այլ հոգեւոր երգեր: Եկեղեցական երգչախմբի գլխաւոր սիւներից էին Մարօ Թամրազեանը, Ժենիկ Բարսեղեանը, Գոհարիկ եւ Հրանուշ Եղիազարեանները եւ շատ ուրիշներ: Երկար տարիների ընթացքում եկեղեցական երգչախմբի ղեկավարներն են եղել Զօրա Բժշկեանը, Գառնիկ Միրզայեանը, Մարտիկ Աւետիսեանը, Վարդան Մարտիրոսեանը, Արաքս եւ Անահիտ Ջարգարեանները եւ Վէրդէն Ասատրեանը: Իսկ երգեհոնահարն էր Ներսէս Տ. Մեսրոպեանը:

Արժէ յիշել այստեղ, որ բարձրաստիճան հոգեւորականների,նչպէս նաեւ համազգային մեծ դէմքերի գրողների, մտաւորականների մահուան առթիւ Ղազուինում կատարել ենք հոգեհանգիստ, երբեմն սգահանդէս, որոնց իր մասնակցութիւնն է բերել մեր երգչախումբը: Հոգեհանգիստ եւ սգա-

Շաք.ը էջ 23

MEDIA CITY BALLET
Natasha Middleton, Artistic Director
presents
The Nutcracker
At the Historic Alex Theatre in Glendale
Saturday, Dec. 6 & Sunday, Dec. 7 at 2:00 & 7:00 PM
Tickets: Call 818-243-2539 or www.alextheatre.org
For more information visit www.mediacityballet.org
Massis Weekly, DANCE CHANNEL TV, TARGET, Tribune, See's CANDIES, Valley Sun, Burbank Leader, Pasadena Weekly, PIP, pasadena MAGAZINE, Enriching Lives, Los Angeles County Arts Commission, NDR BYBLES, Valley Scene, GANGI DEVELOPMENT

ՊԱՏՄԱԿԱՆ

**ԴՐՈՒԱԳՆԵՐ ՍՈՒԷՏՅՈՅ
ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵՆԵՆ**

Շատ սակաւ են նրանք, ովքեր՝ իննսուուն տարիներ առաջ, իրենց հայրերի ու մայրերի շախկաններին, կամ նրանց փէշերից կախուած՝ քայլել էին հասնելու գազաթը իրենց լեռան, որի պատնէշած բարձունքներից կրակ պիտի տեղային իրենց ազատութիւնը մարելու եկած թշնամու դէմ: Եթէ դուք լսել էք նրանցից մէկի թէկուզ սկար չիշողութեան խօսքը, կարծէք այն արձագանգը լինի մարտերում պայթած հրացանների որոտների, նրանց դէմքերից հոտոյ ժպիտը իրենց յաղթանակի փառքի պսակը, նրանց աչքերից թռչող կայծերի լոյսը արեգակի ճառագայթներ, որոնք ազատութեան ու կորովի ճախրանք են փայլատակում: Սակաւ են նրանք, եթէ ոչ բոլորովին յանգած, որոնց մտքերի չիշողութիւնների անդատաններից կը հնչէին խօսքի պատասխաններ իրենց Մուսա Լեռան գազաթին մղուած քաջերի մարտերի խոյանքներից: Ուշանում ենք, ուշացել ենք միշտ, ինչու ժամանակին չենք ձայնագրել այդ քաջերի բարձունքներից թշնամու գորքի վրայ թափուող ժայռերի հոնդիւնի մասին, որոնք արեւի ճառագայթներին յենած՝ սլացել են արմէնների հին աստուածների տիեզերական տաճարներ՝ Վահագն ռազմի աստուծուն պատմելու իրենց սիրանքը:

Սակայն, դեռ կան լեռնականների բազում ժառանգներ, որոնց հոգիներում պայթում են իրենց երկրի հրաշափառ արեւածագը, իրենց արտերի ցորեանի ծովերը, իրենց լեռան ալիքուող կանաչ ովկիանը, իրենց ծիածան կապած այգիները, հայոց ծովածոցից իրենց լեռների լանջերը այցի եկած գեփիւռի համբոյրը: Նրանք ունկնդրել են պատմաները իրենց պապերի ու հայրերի, այն դարձրել առասպելական հէքիաթ, այն դրոշմել թղթին, որից ժայթքած լոյսը բովաքսուել է բազում սրտեր: Նրանք իրենց ոսկեշունչ «աշնանը» թռուների ու ծոռների սրտերին երկրի ոգու կրակն են ցանում: Բնօրրանից պոկուած՝ Մուսա Լեռցի, Սասունցի, Մշեցի, Ձէյթունցի, Վասպուրականցի, Կիլիկիացի, Շատախցի, Հայաստան աշխարհի օտարացած շէների հայերի հոգիներում երկիրն իրենց որպէս ատրուշան, հին աստուածների բազին, նոր հաւատքի տաճար դարձրած՝ պաշտամունք են մատուցում եւ այն տանում դէպի իրենց տիեզերական յաւերժութիւն:

Պրոմէթիոսի կրակի ջահը ձեռքին, Ապոլլոնի բանաստեղծական ներշնչանքի կարմիր հուրը սրտում, տիեզերքից իջած մի այլ իմաստուն, այդ լեռան մարտերի քաջութեան զօղանջների լոյսը ճառագայթեց երկիր մոլորակում եւ չորս տասնեակ ազգեր այն վառեցին իրենց որդեաց սրտերում: Ֆրանց էր նրա անունը, Վէրֆել գերդաստանից, այդ լեռներից շատ հեռու՝ Աւստրիա չքնաղ երկրում արեգակի լոյսն էր ողջունել: Աշխարհի ազգերի պատերազմում ամենայն յանդուգն ու դիւցազնական այդ լեռան կռուի հրաշունչ պատումը

փառք բերեց նրան:

Իննսուուն տարիներ սահել են դէպի տիեզերքի յաւերժութիւն, սակայն դեռ անմար են այդ լեռներում բոցավառուած կռուի խարոյկների բոցերը, դեռ բազում ազգերի լեզուներով հնչում են այդ կռուի գէնքերի որոտների զօղանջները, չխամրող փառքի արեւալոյս պարգեւելով այդ լեռան, նրա գազաթին յաղթանակի լուսապսակ աստղեր վառելով, Վահագնի ծնունդի եղեգան կարմիր բոցով հրավառելու տանութ դիւցազուն քաջերի բոսոր արեամբ նարօտած կարմիր լեռը:

1890-ական թուականներին, Դաւիթի «Թուր կեծակին» կարծէք նորից ընդվզման ու մարտի կայծեր էր ժայթքում, կարծէք Մհերը պատուել էր իր սպառաժեայ դուռը, դուրս էր թռել՝ թշնամու դէմ կռուի նետուելու: Փոթորիկ էր Սասունը ազատութեան մարտերով, «պայթող աղբիւրից» սպիտակ ձին էր ճախրել՝ հերոսածին Անդրանիկ դուցազնին իր թամբին գրկած զարկում էին թշնամուն բազում շարան, շարան ֆէտայիներ: Մարութա սարը իրենց թիկունքին, սասնայ սարերը գրկած, այնտեղ պայթած շանթերը որպէս նիզակներ, արեւից արծաթ հագած ամպերի ծիածանը որպէս դրօշակ ծածանած, կռուի էին ելել իրենց Դաւիթի աշխարհում ազատ ապրելու հէքիաթով հրավառուելու: Թուրքն էր իր բանակով արշաւում այդ լեռներն ի վեր, թալանելու ընչաքաղցով մոլեգնած քուրտն էր նրանց հետ: Վայրենացած հնդեւրոպացի թուրք, քու ոչխարների հետ խաղաղ մնայիւր Կորտուքի քու լեռներում, կարծում էիր նրանք խնայել էին քեզ, կոտորեցին քեզ քսանականներին, երեսունականներին, հիմա այրում են քու գիւղերը, հիմա էլ սպանում են քու զաւակներին: Հզօր էր թշնամին իր բանակով, թնդանթներով հասել էր այդ լեռները, ընկճել էր այն: Եւ ազատութեան համար, արմէնների արիւնը նորից կարմիր էր կապելը իր սարերին, Մարութա սարն էր ապաստանել պարտուած մարտիկներին:

Դարձեալ իննսուական թուականներին, Ձէյթունը իր գաւառակի երկու հարիւր գիւղերով իր քառասունմէկերորդ յաղթական կռուին էր մղում թուրքի դէմ: Նա պահպանել էր Ռուբինեան իշխանական տոհմերի ազատութեան ոգին եւ վարում էր ինքնիշխան, կիսանկախ գոյութիւն օսմանեան տիրապետութիւնից: Յարձակուող թրքական բանակը փշրում էր նրա լեռների փէշերին: Ամօթահար սուլթանը խնդրել էր Եւրոպական հիւպատոսներին ու դեսպաններին միջնորդելու պատերազմական գործողութիւնները դադարեցնելու եւ հպատակեցնելու Ձէյթունի իշխանութիւնը:

Սակայն Մուսա Լեռը կանգուն էր: Ձէյթունի մարտերից յետոյ, այնտեղից ետ քաշուած գորքի մի մասը եկել էր բանակելու Սուէտիա՝ Մուսա Լեռան դիմացը, սպառնալով ընկճել այնտեղ ահագնացած անհնազանդութեան ու յեղափո-

խական ընդվզումը:

1890-1893 թուականներին Մուսա Լեռը մերժել էր տուրք վճարելու պետութեանը, ներքին կառավարում էր հաստատել, բոլոր խնդիրները արդարութեամբ իրենք էին լուծում: Շրջակայ ցեղերը, նոյնիսկ թուրքերը յայտարարել էին, որ վիճարոյց հարցերի նկատմամբ, հայոց դատաստանը միշտ արդար էր եղել: Հայութեանը սիրաշահելու համար, իշխանութիւնները մեղմ քաղաքականութիւն էին վարել Մուսա Լեռան հայերի հանդէպ, ապստամբութիւնը խաղաղ միջոցներով տապալելու համար: Այնտեղ էին ժամանած եղել Հնչակեան ականաւոր գործիչներ՝ Աղասին, Ապահը, Մլեհը, Պահլաւը եւ շատ ուրիշներ:

Թրքական գորքերի ժամանելուց յետոյ, անցել էին չորս շաբաթներ: Բանակի զինուորական նախապատարաստութիւնները աւարտուել էին սպառնացել էին յարձակել, քանի որ հայերին սիրաշահելու բոլոր փորձերը ապարդիւն էին եղել: Ժողովուրդին խաղաղօրէն հնազանդեցնելու ու նրանց անձնատուութեան ծրագրի իրականացումը անյաջողութեան էր մատնուել: Այնուամենայնիւ, մինչ յարձակում նախաձեռնելը, հրամանատարը թրքավարի կեղծաւորութիւններով ազդարարութիւն էր ուղարկել Մուսա Լեռան վեց գիւղերի թաղական խորհուրդներին՝ դադարեցնելու ապստամբութիւնը եւ հնազանդելու իշխանութիւններին: Պահանջել էին այն փակցնել եկեղեցիների դռներին:

Հնչակեան նահանգային վարչութիւնը իր 14 մասնակիցներով նիստ էր գումարել ստեղծուած ճգնաժամային կացութիւնը քննելու եւ թէ արդեօք նախապատրաստուած զինուած ապստամբութիւնը յաղթանակ կարող էր ապահովել: Ապստամբութեան յաջող էլքի համար շատ նուազ էր գնահատուել յաջողութեան յոյսը: Սակաւաթիւ գէնք, գինամթերք ու սննդի պաշար էին եղել իրենց տրամադրութեան տակ: Ժողովուրդը երկփեղուած էր եղել: Անհեռատես, սակայն վճռականօրէն տրամադրուած երիտասարդութիւնը «Ազատութիւն կամ մահ» էր գոչել, իսկ ժողովուրդի մի մասը տեղեակ լինելով Հայաստանի ու Կիլիկիայի արհաւիրքներին, նախընտրել էր ապստամբութեան փոխարէն ժողովուրդի այս երկու տարբեր հոսանքների բաժանումը, շարունակելով հայութեան հանդէպ մեղմ քաղաքականութիւն վարել եւ հնազանդողներին ներման արժանացնել: Նրանք յորդորել էին ժողովուրդին ընդդիմանալու յեղափոխական ինքնապաշտպանական գործողութիւնների իրականացմանը:

Յեղափոխական վարչութիւնը



բացառել էր գալիք ինքնապաշտպանական մարտերին արտաքին օգնութեան հնարաւորութիւնը կամ օտար միջամտութիւնը: Ամենայնդէպս յեղափոխականները պարտաւորուել էին չլքել ժողովուրդին, մերժել Մուսա Լեռից դուրս գալը եւ գործել դէպքերի յետագայ ընթացքի համեմատ:

Թրքական հրամանատարի ազդարարութիւնը, արեւելեան կեղծապարիշտ եղանակով գնահատել էր հայ ժողովուրդի հնազանդութիւնը օսմանեան պետութեանը, որ նրանք իբր նրա հովանաւորութիւնն էին վայելած եղել ու խաղաղ ապրել եւ թէ վերջին շրջանին օտարներ էին ժամանած եղել ու անհնազանդութեան գաղափարներ տարածել: Յորդորել էին յեղափոխականներին յանձնելու բանակատեղի, եթէ վստահութիւն չէին տածի, թոյլատրելու էին օտար շոգենաւով դուրս գալ երկրից, հակառակ դէպքում, բանակը գրոհելու էր իրենց բնակավայրերը:

Վերահաս վտանգը մտահոգել էր ժողովուրդին, սակայն նրանք գոհունակութեամբ էին ընդունել պետութեան կողմից իրենց յեղափոխականների նկատմամբ ցուցաբերած զիջողականութիւնը: Անչափ հպարտացել էին, որ ֆրանսական մի նաւ խարսխելու էր իրենց լեռան ստորոտի կապուտ ջրերին եւ յեղափոխական գործիչները իրենց գէնքերը խաչաձեւած պիտի բարձրանային նրա կամրջակը:

Յեղափոխականների մերժումը քննարկելու համար, Եօղունուրդի եկեղեցի էր ժամանել վեց գիւղերի աւագանին: Եօթանասուն երեք թաղական խորհուրդների պատասխանատուները ժողով էին գումարել՝ քննարկելու յետագայ գործողութիւնների ընթացքը: Առանց վճռական որոշման յանգելու, ժողովը երեք օր շարունակ նիստեր էր գումարել: Սակայն անհրաժեշտ էր եղել պատասխանել հրամանատարութեան ազդարարութեանը: Յարձակման վերահաս վտանգը հաշուի առնելով եւ այն որ հնարաւոր չէր զինուած դիմադրութիւն կազմակերպելու ու իրա-



**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ
ՀՌՉԱԿԱԴՐՈՐ
MISSION LIQUOR
ԽՄԻՉՔԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹԻ
ԿԵԴՐՈՆԸ**

**ԿԵՐՋԱՊԵՆՍ...
ԿԼԵՆՏԵՅԼ
ԿՈՒ ԳԱՅ**

*Շատ մօտ, մօտ, մօտ օրէն
Ձեր յառաջիկայ փոնական օրերու
սեղանները ճոխացած
պիտի ըլլան MISSION LIQUOR-ի
բացառիկ գիներով եւ խմիչքներով:*

*Մեր գիները անհամեմատելիօրէն
աժան են:*

Եկէ՛ք եւ անձամբ փորձեցէ՛ք:

ԿՈՂՁՈՒՆԵՆՔ ՍՓԻՒՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՉԱՏԱՏՈՒՄԸ

Մարումակուած էջ 1-էն

Հայրենի բանտերը լեցուած են փառանոտարկեալներով, ինչպէս երէկ՝ Արեւմտահայաստանի մէջ: Սփիւոֆահայը կը դատապարտէ հայրենի իշխանութիւններու այս մեծատիրական գործելակերպը:

Տիկ. Նախարարուհին լաւ գիտէ, թէ այս պայմաններու տակ դիւանագիտական, քաղաքական, քաղաքական, կամ բնակարարական դոյզն դիտարկում, ձգտում, մօտեցում՝ Սփիւոֆահայուն՝ ժխտական անդրադարձ պիտի բողոքող հայրենի ազգայնականութեան մօտաւորապէս եռապատիկը կազմող սփիւոֆահայութեան վրայ, որուն քաղաքական մեծամասնութիւնն այսօր, խորը վերապահութիւններ կը տաժէ. հայրենի իշխանութիւններուն դէմ:

Տարակոյս չկայ՝ որ ան գիտէ, թէ Սփիւոֆի Նախարարութիւնը կոչուած է ըլլալու անկողմնակալ: Ուղղամիտ: Արդարադատ: Հոգեկից: Սփիւոֆահայութեան վստահելի ձայնը:

«Եկաւ», «տեսանք», «լսեցինք»:

Աւելի՛ զեկուցեց: Թելադրեց: Փորձեց համոզել: Կատարեց՝ իւրաքանչիւր սփիւոֆահայու հաւատամբը կազմող «Մայր հայրենիքի առաջընթացն ու գործունէ մոլորակը հայրենի խնդիրն է» եւ «Հայրենիքը հզօր եւ ուժեղ է Սփիւոֆով, սփիւոֆը հայրենիքով» հաստատումներ՝ գորս իր նշանաբանները դարձուցած էր Տիկ. Հրանուշ Յակոբեան:

Նաեւ, ան անդրադարձաւ իր նախարարութեան յետագայ ծրագիրներուն մասին, որոնց մէջ գործնական է դուրս, զեկոյց մը ամբողջացնելու միտում կար առաւելաբար: Ծրագրի մէջ կը մտնէին Համահայկական կրթական ծրագրերու իրականացման բերուելիք նպաստը, հայապահպանման հրամայականը, աշխարհասփիւոն հայրենի հայրենադարձութեան պարագան, նաեւ սփիւոֆահայերու արդիւնաւէտ մասնակցութեան համար- հարցը կը վերաբերէր Հայաստանի տնտեսական ծրագրերուն Ափիւոֆի ձեռներէցներուն ներգրաւումին- նպաստաւոր քաղաքական, տնտեսական, մշակութային, իրաւական եւ հոգեւոր միջավայրի ստեղծումը:

Բայց այդ բոլորի շարքին, յատուկ կարեւորութեամբ կ'անդրադարձուէր Հայաստան-Սփիւոֆ գործակցութեան հրամայականին վրայ, պարագայ՝ որու մասին անդրադարձանք վերի պարբերութիւններու մէջ, նկարագրելով Հայաստանի Հանրապետութեան պարզամտ քաղաքական-նախանձելի հասարակական իրավիճակը, ուր քսիմք է կը տիրէ երկփեղկում, անապահովութիւն եւ քաղաքական մեծատիրութիւն:

Մեր յարգամեծար Նախարարուհին՝ Տիկ Հրանուշ Յակոբեան, փորձառար գիտէ, թէ ամէն գործակցութիւն կը պայմանաւորուի վստահութեամբ, ներազգային միասնութեամբ, որ դժբախտաբար, այսօր կը բարբառուի աւուր պատշանի եղած պատգամներու մէջ:

Մեր Նախարարուհին փորձառար գիտէ նաեւ, որ այդ վստահութիւնն ու միասնութիւնը կ'ընդհարուի հայրենիքի մէջ ազատ, արդար եւ ժողովրդավար վարչակարգի ներքին: Վստահութիւնն ու միասնութիւնը կը վերահաստատուին քաղաքականութեան արժանաւորութեամբ, որ օրինակաբար, ազատ մտածողութիւն, խօսքի ազատութիւն եւ ժողովրդավար հայրենիք մը պահանջել է եղած:

Կը մտածենք, նախարարութեան առաջադրած «Սփիւոֆի Նախարարութեան Նպատակները եւ խնդիրները», ինչպէս նաեւ «Նախարարութեան մօտակայ ծրագրերը» իրենց սահուն գործնականացումը կը գտնենք, եթէ իրականութիւնը դառնայ ազգային միասնութիւնը՝ հայրենիքէն ներս, եւ հայրենիքի եւ սփիւոֆի միջեւ, աշխարհով մէկ առած:

Կ'եզրափակենք մեր մտորումները: Մարումակուելու եթէ ըլլանք, կրնանք շատ հեռուները երթալ: Մեր նպատակը չորս վեր բաշխել է: Մերը՝ ողջոյնի խօսք մըն է ուղղուած՝ մեր նորաստեղծ Սփիւոֆի Նախարարութեան, որու հետ մեր ունեցած մտերմութիւնը փոխանակութեան լոյսին տակ, փորձեցինք արձանագրել կարգ մը քանակական մեծութիւններ, որոնք ուղի կը հարթեն դէպի հայրենիք-սփիւոֆ գործակցութիւն, եւ Սփիւոֆի Նախարարութիւն-Սփիւոֆ կապերու սերտացում:

Բարի եւ յաջող երթ Սփիւոֆի Նախարարութեան, եւ Նախարարուհի՝ Տիկ. Հրանուշ Յակոբեանին:

ՀՐԱՆՈՅՇ ՅԱԿՈՐԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ Ա.Դ. ՀԱՉԱԿԵԱԿՆ ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ

Մարումակուած էջ 1-էն

Նապետ Տօքթ. Համբիկ Սարաֆեան նախ շնորհակալեց Տիկ. Հ. Յակոբեանը, նորաստեղծ սփիւոֆի նախարարի պաշտօնն ստանձնելուն առիթով, մաղթելով բարի գալուստ եւ յաջողութիւն իր առաքելութեան:

Տիկ. Յակոբեան խօսք առնելով Համառօտ ակնարկով մը նախ ծանօթացուց ցարդ կատարուած աշխատանքները եւ ապա ծանրացաւ հայրենիք-սփիւոֆ կապերու ամրապնդման, հայ նոր սերունդի հայեցի դաստիարակութեան հիմնահարցի, հայրենադարձութեան, Հայ Տունի գաղափարի եւ յատկապէս հայ ժողովուրդի միասնականութեան ամրապնդման անհրաժեշտութեան մասին:

Յարգելի նախարարն ընդգծեց թէ իր նախարարութիւնն անկախ գործելակերպ ու ծրագիրներ ունի եւ կը կարօտի սփիւոֆի

տարբեր կառուցներու աջակցութեան եւ համագործակցութեան, ի կատար ածելու շատ մը օգտակար նախաձեռնութիւններ: Տիկ. Յակոբեան անդրադարձաւ նաեւ ներգաղթի շրջանին կատարուած դատան վերաբերմունքներուն մասին եւ պատրաստակամութիւն յայտնեց ներողութիւն յայտնելու:

Այնուհետեւ Տօքթ. Հ. Սարաֆեան եւ Տօքթ. Ա. Գազանճեան իրենց ելույթներուն մէջ ընդգծեցին Հայրենիքէն ներս տիրող առկայ դժուարութիւններն ու գործադրուող անադարձութիւնները, որոնք անյարիւր են ժողովրդավարական սկզբունքներուն:

Շուրջ երկու ժամ տեւող սոյն հանդիպումն անցաւ փոխադարձ հասկացողութեան, սրտբաց եւ անկեղծ միջոցառումի մը մէջ, միշտ նպատակակէտ ունենալով հայ ժողովուրդի բարեկեցութիւնն ու հայրենիք-սփիւոֆ կապերու առաւել ամրապնդումը:

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՐԵԿՈՅ

Մարումակուած էջ 8-էն

Կան Վարչութեան ատենապետ ընկ. Սեդրակ Աճէմեան, եւ իր ազնուափայլ տիկինը, ընկերուհի Ալին Աճէմեան, Կ. Վ. ատենադպիր ընկ. Գրիգոր Խոտանեան, Վարչ Մարմնի կազմը իր ամբողջութեամբ եւ 121 ամեակի հանդիսութեան ընթացքին օրուայ զխաւոր բանախօս ընկ. Վահան Շիրխանեան:

Օրուայ հանդիսավար ընկ. Վարդան Քէօրողեան բացումը կատարելով, ներկաներուն բացատրեց հաւաքի իմաստն ու կարեւորութիւնը եւ ապա ամբողջ երեկոյի ընթացքին յառաջ տարաւ, ակումբի բարեգարգման համար անհրաժեշտ նուիրահաւաքի արշաւը:

Ընկ. Տօքթ. Համբիկ Սարաֆեան յայտարարեց, որ երեկոն տեղի կ'ունենար ի պատիւ ընկ. Վահան Շիրխանեանին:

Երեկոյի պատուոյ հիւրը

տրուած ըլլալով որ իր բուն խօսքը պիտի ըսէր յաջորդ օրուայ ընթացքին, բաւարարուեցաւ ողջունելով ներկաները, հաւաքը նմանցնելով Հայաստանեան իր գինուորականի կեանքէն հաւաքոյթներու:

Ապա բեմ հրաւիրուեցաւ Լոնտոնէն յատկապէս հրաւիրուած, համակրելի երգիչ Սամուէլ Վարդանեանը, որուն վարպետ երգեցողութեան ներքեւ, մերթ պարային, եւ մանաւանդ ազգային եւ յեղափոխական երգերու մատուցումով, ներկաները անցուցին խանդավառիչ եւ հաճելի երեկոյ մը, եւ սրահէն մեկնեցան Ս.Դ.Հ.Կ.ի հանդէպ հաւատքով լեցուած:

Երեկոյի ընթացքին տեղի ունեցան առատաձեռն նուիրատուութիւններ, կուսակցութեան կեդրոնատեղիի բարեգարգման նպատակին:

Յ.Ա.

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 for USA
* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel :----- Fax :-----

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ Palm Springs

PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՅՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնելով
(818) 246-0125

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450



Հ.Բ.Ը.Մ. ԵՐՈՒԱՆԴ ՊԱՊԱՅԵԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ «ԱԶԳԱՆՈՒԻՐՈՒՄ»

Շաբաթական 15-էն

րուն, հետեւողական ճիգերով, առանց նահանջելու եւ ընկրկելու»:

«Վաստակաշատ դաստիարակ եւ երկարամեայ տնօրէն Երուանդ Պապայեանի անունը կրող Մանկավարժական Հիմնարկի առաջնութիւնն է՝ հաւաքական ուժերով եւ խօսակցութեամբ զարկ տալ հայապահպանման եւ ազգակերտումի գործընթացին, հայ նորահաս սերունդներուն ջամբելով որակաւոր դաստիարակութիւն՝ նորարար, ամբողջական եւ արդիական միջոցառումներով: Օրինակ՝ Ազգանուիրումի ծրագիրը»:

Թուեմ նաեւ իրագործելի այլ ծրագիրներէն մի քանին:

1. Խորհրդաժողով մը գումարել (Conference of Best Practice) գնահատելու հայ ուսուցիչներուն հաւաքական փորձառութիւնն ու հարուստ վաստակը:

2. Կազմակերպել հայեցի դաստիարակութեան համաժողով (Armenian Education Congress):

3. Հաստատել կայքէջ մը (Website):

4. Ի տես հայերէն լեզուի եւ պատմութեան ուսուցիչներու նօսրացումին, հնարամիտ միջոցներով նոր թեկնածուներ ներգրաւել եւ պատրաստել գանտնք:

5. Հանգստեան կոչուած վատակաւոր ուսուցիչ-ուսուցչուհիները յատուկ ուշադրութեան արժանացնել եւ գանտնք դարձնել մենտորները ապագայ հայ ուսուցիչներուն:

Որպէս գործնական քայլ վերեւ նշուած ծրագրին, յառաջիկայ

Կիրակի, 30 Նոյեմբերին, կէսօրէ ետք ժամը 5-ին, հովանաւորութեամբ՝ Արեւմտեան Թեմի Առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեանի, կազմակերպութեամբ՝ Հ.Բ.Ը.Մ Երուանդ Պապայեան Մանկավարժական Հիմնարկի, առաջնորդարանի «Գալստեան» սրահին մէջ տեղի պիտի ունենայ մշակութիային պատանեկան ձեռնարկ մը:

Ինչպէս գրուած էր անցեալ շաբաթ լոյս տեսած հաղորդագրութեան մէջ, սոյն ձեռնարկը պիտի հանդիսանայ Հիմնարկի «Ազգանուիրում» ծրագրի գործադրութեան մեկնարկը: Այդ օր հանրութեան պիտի ներկայացուին աւելի քան երկու տասնեակ պարման-պարմանուհիներ, որպէս թեկնածու «Ազգանուիրումի Մովսէս Խորենացի» շքանշանին: Նմանապէս, այդ օր անոնք առիթ պիտի ունենան ծանօթանալու տիպար եւ օրինակելի ուսուցիչներու եւ համալսարանականներու ընտրանի խումբի մը, որոնք պիտի ստանան թեկնածուներուն մենտորները դառնալու պարտականութիւնը:

2009-ի Մայիսին տեղի ունենալիք հանդիսութեամբ մը, Առաջնորդ Յովնան Սրբազան «Ազգանուիրումի Մովսէս Խորենացի» շքանշանները պիտի շնորհէ ծրագիրը յաջողութեամբ պատկած ուսանողները:

Այնպէս որ, մեր պարտականութիւնն է խուճներամ ներկայ գտնուիլ եւ քաջալերել «Ազգանուիրում» ծրագիրը թէ յղացողները եւ թէ այդ ծրագրին կեանք ու կենսունակութիւն բերող, ներկան ապագային ծիածանող մեր պարման-պարմանուհիները:

ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄՍՈՒԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ Ա. ԵՒ Մ. ՅՈՎՍԷՓԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ

Շաբաթական 14-էն

րը: Անոնցմէ մին՝ Տիկին Ալին Պզտիկեանը, սոյն շաբաթուան ընթացքին, այցելութիւն մը տուած մեր Ա.-Գ. կարգերու աշակերտներուն ու ներկայացուց իր նոր գիրքը՝ «Վարդենին ու Եղեւնին», հետաքրքրական ձեւով պատմեց զայն աշակերտներուն, որմէ ետք առիթ տրուեցաւ աշակերտներուն իրենց կարծիքները փոխանցելու ներկայացուած նիւթին շուրջ:

Մեր աշակերտները մեծ սէր ու հետաքրքրութիւն կը ցուցաբերեն մեծանուն հեքիաթագիր ու բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի գործերուն նկատմամբ: Աշակերտներուն եւ ծնողներուն հայկական թատրոնի կարօտը յագեցնելու նպատակով, վարժարանս հովանաւորեց Լուսա թատերասրահի բեմադրին՝ Արամի Ստեփանեանին, Թումանեանէն բեմադրած շարք մը հեքիաթներու ներկայացումները: Արհեստավարժ դերասաններու խումբը դպրոց ժամանեց Ուրբաթ, Հոկտեմբեր 24ին եւ դպրոցիս Գալուստեան-Տունեանց սրահէն ներս կեանքի հրաւիրեցին Թումանեանին «Անխելք Մարդը», «Շունն ու Կատուն», «Մի Կաթիլ Մեղր»ը, «Բարեկենդանը», «Կիկոսի Մահը» եւ «Սուտիկ Որսկանը»:

Հաճելի էր դիտել ներկայացումները, որոնց աւանդական թեմայէն չչեղելով հանդերձ, բեմադրիչը այժմէականացուցած էր, ներկայ կեանքին որոշ տուեալներ ներառելով եւ կրցած էր հանդիսատեսին աւելիով հաղորդակից դարձնել ներկայացումներուն: Սրահը լեցուն էր մեր աշակերտներով ու ծնողներով, որոնք իրապէս գոհացած էին, որ ընտանեօք միատեղ համախմբուած կրցան վայելել հայկական թատրոն մը եւ առիթը ունեցան գնահատելու մեր անժամանցելի գրող Յ. Թումանեանին դիպուկ ու անկեղծ ձեւով ներկայացուած հայկական գեղջկական կեանքէն առնուած պատկերները:

Աշակերտական հանդիսութիւնը տեղի ունեցաւ Ուրբաթ, Նոյեմբեր 7ին, երեկոյեան ժամը 6:30ին, Գալուստեան-Տունեանց սրահէն ներս: Օրուան հանդիսավարն էր Լ. կարգի աշակերտուհիներէն Ալիսին Քէշիշեանը, որ ամենայն համարձակութեամբ ու լրջութեամբ կատարեց իրեն վստահուած աշխատքը: Յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին Մանկապարտէզէն-Ութերորդ դասարանի բոլոր աշակերտները: Յայտագրին ճոխ էր պարով, երգերով, իմացիլիս արտասանութիւններով եւ ներկայացումներով: Ուսուցչուհիները նախանձախնդրօրէն կը մօտենան նման յայտագրերու կազմակերպման ընթացքին եւ կը փորձեն բոլոր աշակերտներուն մասնակցութիւնը ապահովել, եւ յայպէտով բոլոր աշակերտները վարժութիւնը կ'ունենան հանդիսատեսներու դիմաց բեմ բարձրանալու եւ ժամանակի ընթացքին կը տիրանան պէտք եղած համարձակութեան եւ կեցուածքին: Ծնողներն ալ գոհունակ սրտով կը հետեւին յայտագրին ըմբռնելով իրենց ներկայացուած եւ ուրախ կ'ըլլան որ ամէն աշակերտ կրցած է իր մասնակցութիւնը բերել յայտագրին:

Մանկապարտէզ-Բ. կարգի աշակերտները երգեցին «Իմ Հայոց Երկիր» եւ «Ինչքան Անուշ է» երգերը: Մանկապարտէզի աշակերտները արտասանեցին «Հայ Լեզու» ոտանավորը:

րը, իսկ Ա. կարգի աշակերտները եղած էին Այբուբենի խորանարդներ եւ արտասանեցին «Մայրենի Լեզու» ոտանավորը: Բ. կարգի աշակերտները ներկայացուցին այբուբենը, որոնք իրենց ուսուցչուհիին ուղղութեամբ միանաբար շարադրած էին իւրաքանչիւր տառով Հայաստանի մասին որոշ գիտելիքներ եւ մանրամասնութիւններ տալով, կ'արժէ նշել անոնցմէ մի քանին, աշակերտներէն մին մտածած էր հետեւեալը «Շա» գիրին համար «Շարունակէք կուռիլ եւ չյանձնուիլ», ուրիշ աշակերտ մը «Ձա» լին համար ըսած էր «Արարատի գագաթին վրայ ձիւնին համար է», եւ «Ղա» լին համար այլ աշակերտ մը ըսած էր, «Ազատ Ղարաբաղին համար է»:

Գ. եւ Դ. կարգի աշակերտները ներկայացուցին թատրոններ, առաջինը «Անահիտ» խորագրով, իսկ երկրորդը՝ Արամ Հայկազին «Սիրելի Աստուած» գործը, որոնք լիաթոք խնդուքներ խլեցին ներկաներէն:

Ապա, յաջորդաբար Գ.-Ե. կարգի եւ Զ.-Ը. կարգի աշակերտներու երգչախումբերը երգեցին «Ձան Դու Լեզու» խանդավառ երգերը եւ ստեղծեցին տօնակատարութեան մթնոլորտ հանդիսատեսներուն մօտ:

Երեկոն ճոխ էր նաեւ ասմունքով, եւ մեր Գ. կարգի աշակերտ Դաւիթ Քէշիշեան հրապուրեց ներկաները իր գեղեցիկ առողանութեամբ ու հիանալի կատարումով արտասանելով Պարոյր Սեւակի «Քիչ ենք Բայց Հայ ենք» ոտանավորը: Է. կարգի աշակերտները արտասանեցին Վահան Թէքէեանի «Տաղ Հայերէն Լեզուի» ոտանավորը, իսկ Ը. կարգի աշակերտները պարտասանեցին Պատուական Խաչատրեանին «Հայաստան» ոտանավորը: Յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին վարժարանիս է. կարգի աշակերտուհիներէն Սինթիա Ալպարեանն ու իր քոյրը՝ Փաթիլ Ալպարեանը, որոնք իրենց նագելի ու ձկուն շարժումներով, գեղեցկօրէն կենդանացուցին Արա Գէորգեանին երաժշտութիւնը:

Յայտագրի աւարտին, Տնօրէնը՝ Շահէ Մանկրեան, շնորհակալութիւն յայտնեց բոլոր ուսուցչուհիներուն, ի մասնաւորի հայերէն դասաւանդող ուսուցչուհիներուն՝ Տիկին Լիզա Մանուգեանին, Տիկին Յովնէ Գէորգին, Տիկին Կարին Սուլեմեանին Տիկին Անահիտ Զէյթնութեանին, երաժշտութեան ուսուցչուհիներուն՝ Օրիորդ Էլմիրա Սիմոնեանին եւ Օրիորդ Կարինէ Աւագեանին, արուեստի ուսուցչուհիին՝ Տիկին Արմին Հաւանին, որոնք աստարեցին ձեռնարկին յաջողութեան, ինչպէս նաեւ մեր ծնողներէն Տիկին Յասմիկ Կիտցիներեանին շնորհակալութիւն յայտնեց, որ սիրալոյսով արժանապարհ կը տրամադրէ եւ մեր Ը. կարգի աշակերտներուն ասմունքը կը վարժեցնէ: Տնօրէնը նաեւ իր փակման խօսքին մէջ նշեց մեր լեզուին հանդէպ նախանձախնդիր ըլլալու կարեւորութիւնը, եւ ծնողներէն խնդրեց պէտք եղած յարգանքն ու սէրը ցուցաբերեն մեր մշակութիւն եւ լեզուին նկատմամբ, որովհետեւ դպրոց ու ընտանիք գիրար ամբողջացնող միաւորներ են եւ միասնաբար աշխատակցելով կարելի կ'ըլլայ մեր յաջորդ սերունդին մօտ սերմանել մեր լեզուին հանդէպ ցուցաբերուելիք արժանի սէրն ու հետաքրքրութիւնը:

ԴՐՈՒԱԳՆԵՐ ՍՈՒԷՏՅՈՅ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՊԱՏՍՈՒԹԵՆԵՆ

Շաբաթական 18-էն

կանացնելու, ժողովը որոշել էր յեղափոխականներին յորդորել հեռանալու եւ որ իրենք շարունակէին հաւատարմութիւն տածել կառավարութեանը:

Ժողովի կողմից կազմուել էր հինգ հոգիանոց մի պատուիրակութիւն, իրենց ընդունած որոշումը անձամբ յայտնելու յեղափոխականներին: Հանդիպումը սիրալիր էր անցել: Յեղափոխականներին կողմից Պահլաւ, նրանց զգուշացրել էր, որ իրենց անձնատուր լինելու դէպքում, կառավարութեան ազդարարութիւնը, արդեօք, իրենց կեանքի ու պատուի պահպանութիւնը երաշխաւորած էր եղել եւ որ արդեօք Մուսա Լեւոստեանը չէր յետոյ, իրենց ձեռնարկած կազմակերպչական ջանքերի շնորհիւ, ապահով կեանք չէին վարել: Մինչ Կիլիկիացու ու Հայաստանի տարբեր վայրերում ահաւոր դէպքեր էին պատահել: Իրենց արտաքսումով, իշխանութիւնների նպատակն էր եղել քանդել այդ կազմակերպչական կառույցը:

Պատուիրակութիւնը վերադարձել էր ժողովատեղի եւ յայտնել յեղափոխականների խօսքը: Ժողովական Ազատեան (հաւանաբար Խըտըրպէկ գիւղից) իր ելույթով յեղափոխականներին առաքելներ էր անուանել եւ առաջարկել պատասխան գրել հրամանա-

տարին, որ բոլորին կեանքի ու պատուի երաշխաւորութիւն տար, կամ իրենք կուռով կը մեռնէին եւ Մուսա Լեւոստ ինքզինք միացած կը հռչակէր Հնչակեան յեղափոխական կազմակերպութեանը: Վաթսուս եօթկնիքներով հաստատուած ստորագրութիւններով, նման բովանդակութեամբ պատասխան գիր էր ուղարկուել բանակատեղի: Վեց ժողովականներ մերժել էին այն ստորագրելու:

Մէկ շաբաթ էր անցել այդ դէպքերից, բանակը խստացրել էր պաշարումը, ճանապարհներին գիւնտուրներ էին պարեկել: Քէպուսիէ գիւղի բարձունքներից թուրք զինուորը սպառնացել էր յարձակուիլ: Յեղափոխականները կարասպետ Կարինեանը շտապել էր գիւղի պաշտպանութիւնը կազմակերպելու: Երիտասարդութիւնը խրամատաւորուել էր, Կարասպետը նրանց հետ տներն էին ամրացրել: Զօրքը ներխուժել էր գիւղ, պաշարել էին ամրացուած տները եւ իրենց առաջ տարած գիւղացիների, սպառնացել էին ոչնչացնել նրանց գիւղը, եթէ մի գիւնտուր իսկ սպաննուէր: Պատահելու ճակատները յետագայ գոհերից խուսափելու համար, դադարեցրել էին դիմադրութիւնը: Քէպուսիէն պարտուել էր, սակայն առանց գոհերի: Յաջորդ օրերին Վազրէֆ, Խըտըրպէկ, Եօղունօլու գիւղերն էլ դադարեցրել էին դիմադրութիւնը:

(Շաբաթական 1)

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ
ՀԱԲԱՔԱԿԱՆԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԱՆԸՆԴԱՏԶ
ՆՈՒԱՃԵՑ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ
ԱՆՈՅԵԱՆԻ ԿՈՉՈՒՄԸ



Շախմատի Հայաստանի հաւաքականը կրկին ուժեղագոյնն է աշխարհում: Դրեգոբենում այսօր աւարտուած համաշխարհային օլիմպիադայում հայ շախմատիստները, 2,5:1,5 հաշուով առաւելութեան հասնելով Չինաստանի նկատմամբ, պահպանեցին ախոյեանի կոչումը: Հայաստանը ախոյեան էր դարձել նաեւ 2006թ.:

Վերջին 11-րդ տուրում Հայաստանի մրցակիցը Չինաստանի հաւաքականն էր, որ դասուած էր ֆաւորիտների թուին: Չինացիները յաղթանակի դէպքում կը շրջանցէին առաջին տեղում ընթացող Հայաստանին, սակայն մեր ընտրանին ոչ մի հնարաւորութիւն չտուեց մրցակցին:

4 խաղատախտակների վրայ էլ հայ գրոսմայստերները առաւելութիւն ունէին: Ակնյայտ էր, որ այս մրցամարտում չինացիները առաւելագոյնը ոչ-ոքի յոյս կարող են ունենալ: Դա էլ բաւական էր, որ Հայաստանը դառնար ախոյեան, քանի որ գուգահեռաբար ընթացող մրցամարտում Ուքրանիան գիշում էր ԱՄՆ-ին 0:2 հաշուով: Հայաստանի եւ Ուքրանիայի հաւաքականները 10-րդ տուրից առաջ հաւասար միաւոր ունէին, բայց լրացուցիչ ցուցանիշներով առջեւում էր Հայաստանը:



Առաջինը աւարտուեց Լեւոն Արոնեան (2757)-Վանգ Յու (2736) պարտիան, որտեղ խաղաղ էլք գրանցուեց: Ոչ-ոքիով աւարտուեց նաեւ Վլադիմիր Յակոբեան (2679)-Բու Հիանցզի (2714) մրցամարտը: Քիչ անց Տիգրան Պետրոսեանը յաղթեց Լի Չույին՝ առաջ մղելով Հայաստանին: Իսկ Գաբրել Սարգսեանը ոչ-ոքի խաղաց Նի Հուալի հետ:

Հայաստանի հաւաքականի բոլոր հանդիպումները.

- 1. Հայաստան-Իտալիա՝ 4:0
- 2. Հայաստան-Մոլդովա՝ 3:1
- 3. Հայաստան-Ֆարերներ՝ 4:0
- 4. Հայաստան-Ուկրաինա՝ 2:2
- 5. Հայաստան-Հոլանդիա՝ 2,5:1,5
- 6. Հայաստան-Ադրբեջան՝ 2,5:1,5
- 7. Հայաստան-Ռուսաստան՝ 2,5:1,5
- 8. Հայաստան-Ֆրանսիա՝ 3,5:0,5
- 9. Հայաստան-Իսրայել՝ 1,5:2,5
- 10. Հայաստան-Սերբիա՝ 3:1
- 11. Հայաստան-Չինաստան՝ 2,5:1,5

Օլիմպիադայի վերջին տուրում յաղթանակ տօնեց նաեւ Հայաստանի կանանց հաւաքականը: Այսօր 2,5:1,5 հաշուով մեր հաւաքականը առաւելութեան հասաւ Հնդկաստանի նկատմամբ: Մեր շախմատիստուհիների կազմում յաղթական միաւորը վաստակեց Էլինա Դանիէլեանը (2513):

Վերջինս առաջին խաղատախտակի վրայ մրցում էր Դրոնավալի Հարիկայի (2462) հետ եւ ինդիերներ չունեցաւ այս պարտիայում: Լիլիթ Մկրտչեան (2443)-Սաչդե Տանիա (2425), Նելլի Ադինեան (2325)-Գատէ Սվատի (2320) եւ Լիլիթ Գալոյեան (2305)-Անն Մարի Գոմես (2298) պարտիաները աւարտուեցին խաղաղ էլքով:

Յաղթելով 11-րդ տուրում՝ Հայաստանը 16 միաւորով զբաղեցրեց 6-րդ հորիզոնականը: Դա միանգամայն տրամաբանական էր, քանի որ մեր ընտրանին իր վարկանիշով եւս 6-րդն էր մրցաշարում: Նախորդ օլիմպիադայում Հայաստանի կանանց ընտրանին գրաւել էր 8-րդ հորիզոնականը:

Ախոյեանի կոչումը նուաճեց Վրաստանը, որ այս տուրում 3:1 հաշուով առաւելութեան հասաւ Սերբիայի նկատմամբ: Վրաստանի կազմում փայլուն խաղ ցուցադրեց փորձառու Մայա Չիբուրդանիձեան: Վերջինս հանդէս է գալիս նաեւ Երեւանի «Միկա»-ում: Արժաթէ մետալների արժանացաւ Ուքրանիայի հաւաքականը:

ԳՐԱԻՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆ
ԿԸ ԽՆԴՐՈՒԻ ԶԽԱԶԱԶԵԻՇԸ

29 Մարտ, 2009, Չորք-Մարգպան աւանի (Տորթ-Եոլ, Կիլիկիա) 1909ի Մեծ Զերոսամարտի 100 ամեակի հանդիսութիւն:

ՖՈՒԹՊՈԼ

«ԱՐԱՐԱՏ»-Ը ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ Է

Երեւանի «Արարատ» ակումբը արդէն բողոքարկել է «Փիւնիկ»ի հետ կայացած հանդիպման մրցավարութիւնը: Այս մասին «Ա1+»-ին յայտնեց «Արարատ»ի մարզիչ Գէորգ Քամալեանը. «Մենք արդէն բողոք ենք ներկայացնում ՀՖՖ-ին»:



Խօսելով հանդիպման մասին՝ Քամալեանը ասաց. «Մեկնաբանելու ոչինչ չկայ: Բոլորի աչքի առջեւ է տեղի ունեցել, մարզիկ ամէն ինչ իրենց աչքերով են տեսել»:

Քամալեանը յայտնեց նաեւ, որ «Արարատ»ի շուէյցարահայ հովանաւորները բողոքարկման գործընթաց են սկսել նաեւ Եւրոպայում: Մասնավորապէս, «Արարատ»ը դիմելու է ՌԻՇՖԱ՝ «Փիւնիկ»ին տեխնիկական պարտութիւն գրանցուելու համար, քանի որ ըստ ակումբի՝ մրցակցի 2 ֆուլթայլիստներ իրաւունք չունէին մասնակցել ոսկէ հանդիպմանը:

Խօսքը էր գար Մալաքեանի եւ Գէորգ Ղազարեանի մասին է, որոնք, Հայաստանի առաջնութեան վերջին 28-րդ տուրում ստանալով 3-րդ զգուշացումները, պէտք է բաց թողեցին յաջորդ խաղը:

Սակայն ոսկէ հանդիպումից 2 օր առաջ ՀՖՖ-ն յայտարարել էր. «Որոշուել է՝ վերը նշուած թիմերին խաղային հաւասար պայմաններ ապահովելու համար, նախորդ խաղում զգուշացում ստացած ֆուլթայլիստների որակազրկումը համարել չեղեալ»: «Արարատ»ում որակազրկուած էր միայն Հրայր Մկոյեանը, որին թեեւ ՀՖՖ-ն իրաւունք էր տուել դուրս գալ խաղադաշտ, սակայն «Արարատ»ը նրան չէր յայտաւորել հանդիպմանը, իսկ ահա «Փիւնիկ»ի խաղացողները թիմի մեկնարկային կազմում էին: «Կանոնակարգում նման կէտ չկայ, որ խաղացողների որակազրկումը հենց այդպէս հանեն», - նշեց Գէորգ Քամալեանը:

Ի դէպ, չի բացառուում, որ «Արարատ»ը վերջին շրջանում թիմի շուրջ տեղի ունեցած իրադարձութիւնների առիթով ՀՖՖ-ի դէմ հայց ներկայացնի Լոզանի սպորտային արբերատաժային դատարան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ 4 ԵՒԴՈՒՍՏԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄՐՅԱՇԱՐԻ ՄՐՅԱՆԱԿԱԿԻՐ ԴԱՐՁԱՆ

Նոյեմբերի 20-23-ին իտալիայում անցկացուեց ճիւղային միջազգային պատանեկան մրցաշար (12-14 տարեկաններ): Հայաստանից հանդէս եկան 8 մարզիկներ: Բոլոր գոտեմարտերը յաղթանակով աւարտեց եւ առաջին տեղը գրաւեց Սամուէլ Խաչատրեանը (38 կգ, Երեւան): Ռոգա Խաչատրեանը (48 կգ, Երեւան) դարձաւ երկրորդ, իսկ Ազատ Մկրտչեանը (50 կգ, Երեւան) եւ Աշոտ Գասպարեանը (50 կգ, Երեւան)՝ 3-րդ մրցանակակիրներ:

Չեր Ծանուցումները Վստահեցէք

«Մասիս» Շաբաթաթերթին

T: (626) 797-7680 F: (626) 797-6863

massis2@earthlink.net

www.massisweekly.com

ԲԱՑՈՒԱԾ Է

Հիպնոսաբուժութեան կեդրոն

ղեկավարութեամբ՝

Փորձառու բժիշկ Արթին Սադրեանի

Փասսատիմայի մէջ

Ամէն օր՝

առաւօտեան ժամը 10:00էն մինչեւ

կ.ե. ժամը 3:00

Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E

Pasadena CA 91104

Հեռախօս (818) 434-8118 միայն ժամադրութեամբ

«Միտք մարմնի վրայ» թուլացման (relaxation) միջոցաւ

կը դարմանուին.

- Մարմնային ֆրոնիկ հիւանդութիւններ, արեան գերնշում, շաբաթախտ, ազմա, եւայլն:
- Մոլութիւններ - սիկարէթ, ալիւ, թմրադեղեր, եւայլն:
- Հոգեկան տագնապներ - անձկութիւն, ընկճուածութիւն, վախ, անփութիւն, եւայլն:
- Մանուկներու յատուկ վիճակներ - ADD, գիշերային մէզ, եղունգի կրծում, եւայլն:
- Ուսումնական եւ սրբօրային բարեւաւում

«ԿԵԱՆՔԻ ՅՈՒՇԵՐ»Ի ՇԱՐՔԻՑ

Շարունակում էք 17-էն

հանդէս ենք կազմակերպել Գէորգ Զ. Վեհափառ հայրապետի, Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսի, Հրաչեայ Աճառեանի, Մելիք Թանգեան Սրբազանի, Աւետիս Ահարոնեանի, Նիկոլ Գալանդէրեանի եւ այլ հանրային եւ Մշակութային գործիչների յիշատակին:

ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Ղազուհինը գտնուելով քառուղու վրայ, հանդիսացել է բազմաթիւ հայ մտաւորականների այսպէս ասած մի ժամադրավայրը: Կովկասից եւ Մայր Հայրենիքից իրան անցած մի շարք ուսուցիչներ եւ մտաւորականներ մի քանի տարի ապրել են Ղազուհինում ու պաշտօնավարել ազգային դպրոցում: Այդ անունները եւ կարողացաւ ձեռք բերել դպրոցական արխիւներից եւ տեղեակ անձնաւորութիւններից: Այստեղ յիշեմ ցարդ Ղազուհինի ազգային դպրոցում պաշտօնավարած ուսուցիչ-ուսանողների անունները. Վալդր Վալդեան, Մուշեղ Թամրազեան, Ալեքսան Տ. Վարդանեան, Վարդան Յարութիւնեան, Արշակ Ղազարեան, Հմայեակ Աւագեան, Կարապետ Յակոբեան, դոկտ. Բաղդիկ Մինասեան: (Յիշեմ, որ դոկտորը Ղազուհինում հիմնում է լրացուցիչ գործնական դպրոց, Լ.Գ.Դ. Միջնակարգի ծրագրով, որն հազիւ 2 տարուայ կեանք է ունենում), Ամատունի Արզումանեան, Զօրա Բժշկեան, Հայկ Օհանեան, Արտակ Բաղալեան, Օժիկ Յարութիւնեան, Վարսենիկ Դաւթեան, Օժիկ Գալստեան, Արմենակ Փոխարեան, Տիգրան Սողոմոնեան, Ալեքսան Գրիգորեան, Մարտիկ Աւետիսեան, Արաքս Հայրապետեան, Վարդան Մարտիրոսեան, Վազգէն Օհանջանեան, Համասիկ Սաչեան, Աշխէն Միխիթարեան, Աստղիկ Յարութիւնեան, Մանիկ Խոսրովեան, Դր. Մեսրոպ եւ Ներսէս Տ. Մեսրոպեաններ (Բալայեան), ինչպէս նաեւ Դր. Երուանդ Ֆրանգեան, Սարգիս Սարգսեան, Թորգոմ Մարտիրոսեան, Խաչատուր Գրիգորեան, Սաթենիկ Գրիգորեան, Մելքոն Յակոբեան եւ Համբարձում Գրիգորեան:

ՂԱԶՈՒԻՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Ղազուհինահայ գաղութը իր կազմաւորման սկզբից, ունեցել է զանազան միութիւններ, բարեգործական, մշակութային, գրական, մարզական եւ այլ անունների տակ: Ա-ին, աշխարհամարտից յետոյ, երբ Արեւմտահայաստանից իրան են գալիս բազմահազար հայ գաղթականներ եւ որոնցից մի մասը տեղաւորում է Ղազուհինում, այստեղ անմիջապէս հրապարակ են գալիս բարեգործական յանձնախմբեր եւ միութիւններ, գաղթականների ոգնելու նպատակով: Իսկ իմ Ղազուհին ժամանումից յետոյ, վե-

րահասութիւն տալու համար տեղւոյս աղօթատան ներքին կահաւորումին, ինչպէս նաեւ բարեզարդելու մեր Ս. Հռիփսիմէ նորակառոյց եկեղեցին (1937 թ.) մի շրջաբերականով ժողովի հրաւիրեցի Ղազուհինի մի խումբ կանանց եւ հիմնադրեցինք կանանց Բարեգործական եւ Եկեղեցաւարաց Միութիւններին, որոնք ունեցան բեղուն գործունէութիւն: Կանանց Միութիւնները - երբեմն ուրիշ անուններով - իրենց գոյութիւնը շարունակեցին մինչեւ 1964 թիւը, որից յետոյ դադարեցին գոյութիւն ունենալուց, համայնքիս թուի նուազման պատճառով: Այդ միութիւններին նախագահել են տիկնայք՝ Տիգրանուհի Բարխուդարեանը, Ազնիւ Քեռողլեանը, Աշխէն Օջաղեանը, Միհրդուխտ Յակոբեանը, Օֆելիա Տ. Յովհաննիսեանը եւ ուրիշներ:

Բ. աշխարհամարտից առաջ, երբ ամբողջ երկրում փակուեցին հայոց ազգային դպրոցները, մատող սերնդի դաստիարակման համար կարիք զգացուեց հիմնել Մշակութային եւ մարզական միութիւններ:

1938 թուին, Թիֆլիսից Ղազուհին հասաւ դերասան Սարգիս Սվաճեանը, նրա առաջին գործնեղաւ հիմնադրել «Ղազուհինի հայ դրամատիկ թատրոնը» եւ բեմադրել մի շարք թատերգութիւններ, այդ թւում՝ «Պատուի Համար», «Չար Ոգի», «Նամուս», «Աշխարհի Դատաստանը», «Շերլոկ Հոլմս», «Աւագակները», «Կորրադո» եւ այլն:

Իսկ բեմադրած օպերետներից յիշեմք «Ուշ Լինի, Նուշ Լինի», «Աշուղ Ղարիբ», «Սայեաթ Նովա», Այդ բեմադրութիւններին մասնակցեցին մի խումբ դերասան՝ Ս. Սվաճեանի ցուցմունքներով եւ դաստիարակութեամբ որոշ յաջողութիւններ արձանագրեցին: Դրանց թւում պիտի յիշել հետեւեալ անունները՝ Աթանես Մկրտչեան, Մարտիկ Հախպանդեան, Կարապետ Դաւթեան, Զարիկ Ղազարեան, Գառնիկ Միրզայեան, Արտուշ Մկրտչեան, Յովհաննէս Տ.ովհաննիսեան, Սերոժ Մուշկամբարեան, Վարդան Մարտիրոսեան, Յովհաննէս Տ Մեսրոպեան, Հրանուշ Տ. Յովհաննիսեան, Աննիկ Սվաճեան, Յասմիկ Շահնազարեան, Աննիկ Մովսիսեան, Գենոֆ Տ. Յովհաննիսեան:

1941 թուին մի խումբ պատանիների միջոցով հիմնադրուեց «Կամք» Մշակութային Միութիւնը, որն ունէր իր ձեռագիր ամսագիրը: «Կամք»-ի հիմնադիրներէն էին՝ Իշխան Գրիգորեան, Սուրիկ Սարգսեան, Արմիկ Հախպեղեան, Մեսրոպե Տ. Մեսրոպեան (Բալայեան), Ժան Գասպարեան, Արտուշ Յարութիւնեան, Աւետիք Ստեփանեան: Նոյն թուին հիմնադրուեց «Կայծ» Մշակութային Միութիւնը,

որն հազիւ 5-6 ամսուայ կեանք ունեցաւ: Հիմնադիրներն էին՝ Հարփիկ Թամրազեան, Գազիկ Տ. Յովհաննիսեան եւ Ներսէս Տ. Մեսրոպեան:

Պատերազմի նախօրեակին Ղազուհինում արդէն կեանքի էր կոչուել Հայ Երիտասարդական Կուլտ. Միութիւնը, որն ունեցաւ բեղուն գործունէութիւն: Միութեան նախագահն էր՝ Գառնիկ Միրզայեանը:

Ապա մի խումբ պատանիներ հիմք դրին Հայ Պատանեկան Մշակութային Միութեան, որ իր մէկ տարուայ գործունէութեան ընթացքում կազմակերպեց մի քանի գրական յաջող ձեռնարկներ եւ հրատարակեց մի շարք անուանի հայ գրողների նկարները: Միութեան հիմնադիրներն էին՝ Արտուշ Միրզայեանը, Նորիկ Խաչատրեանը եւ Ներսէս Տ. Մեսրոպեանը (Բալայեան), նոյն տարիներին Ղազուհինում աշխատում էր Հայ մանուկների բարեսէր Միութիւնը, որ պատուոյ նախագահութիւնը յանձնում էր ինձ: Միութեան հիմնադիրներն էին Յովհաննէս Տ. Մեսրոպեանը, (Բալայեան), Գառնիկ Սաֆարեանը, Սերոժ Զաքարեանը եւ ուրիշներ:

Կային նաեւ մարզական խմբեր եւ միութիւններ, որոնք իրենց պարբերական մրցումներով մեծ հռչակ եւ անուն էին ձեռք բերել Ղազուհինում: Պիտի յիշել «Աշիլ» մարզա-

կան Միութիւնը, որն հիմնադրուեց ժամաստիկի վարպետ՝ Հայկազ Տ. Անտոնեանի եւ Վազգէն Յակոբեանի ջանքերով:

Ունէինք ֆութպոլի, վալիպոլի եւ հալթերի առանձին թիմեր: Այդ ուղղութեամբ գնահատելի աշխատանքներ կատարեցին Ռաֆիկ Մարտիրոսեանը, Միհրդատ Մ. Օհանեանը, Սերոժ եւ Բորիկ Մուրադեանները, Մարգար Սաֆարեանը եւ հալթերիստ՝ Էմիլ Օհանեանը:

Տարիներ յետոյ Ղազուհինում հիմնադրուեց Երիտ. Մշակութային մի միութիւն՝ Արուսեակ Յակոբեանի նախագահութեամբ, որ 2 տարուայ կեանք ունեցաւ: Ապա աւելի ուշ սարո Նազարեանի ջանքերով հիմք դրուեց «Կուռնկ» Մարզամշակութային Միութեան, որը կարճ կեանք ունեցաւ:

Բ. Պատերազմի տարիներին հիմնադրուեց Հայ Երիտասարդական «Մշակույթ» Միութիւնը, որն Ղազուհին ամենից բազմամարդ միութիւնը եղաւ:

Միութեան նախագահն էր Զարիկ Ղազարեանը: Միութիւնն ունեցաւ բեղուն գործունէութիւն, Մշակույթի տարբեր բնագաւառներում: Որպէս օրինակ յիշեմք թէ այդ տարիներին, ամէն շաբաթ անպակաս էին զանազան ձեռնարկները՝ դասախօսութիւն, գրական վճճ, դատավարութիւն, կլոր սեղան, զեղարուեստական-թատերական երեկոյ եւ այլն:

ՆՈՐ ՄԵՐՈՒՆԴ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ
CHARTER CABLE 280-ՐԳ ԿԱՅԱՆ
(ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԵՐՊԵՆՔ, ԼՍ ՔՐԵՍԵՆԹԱ)
GLOBACAST SATELLITE
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

ՔԱԶ ՆԱԶԱՐ
ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 10:00-ից 12:30
Կլէնտէյլի 280-րդ կայանից

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ... ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ...
Մեծ Ժողովրդականութիւն Վայելող
Կլէնտէյլի AMGA 280-րդ Ալիքը
Այժմ Կը Սփռուի
GlobeCast
Արբանեակային Հեռատեսիլով
Ամերիկայի, Գանատայի եւ Մեքսիկոյի
Ամբողջ Տարածքին
Դուք Կրնաք Դիտել
Հայաստանեան Լուրեր - Քաղաքական Վերլուծութիւններ
Երաժշտական Հաղորդումներ - Եւայլն
Մանրամասնութիւններու Համար
Հեռաձայնել 818.547.9696

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680



2

alltime **armenian** favorites

KOHAR

Symphony Orchestra and Choir

HP-ADDB-12E

**3 DVD
PACK**
INCLUDING SUBTITLED LYRICS
+ 172 PAGE SONGBOOK

**3 CD
PACK**
+ 120 PAGE SONGBOOK

www.hayasa.us